

«Հայփոստ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱԽՍԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2025թ.

ԵՐԵՎԱՆ 2026

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	9
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

29.05.2026թ.
N 032613

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Բերկո Թրիբ Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն
Վ.Գևորգյան



ԱՆԿԱՆ ԱՆՈՂԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայփոստ» ՓԲԸ-ի բաժնետիրոջը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայփոստ» Փակ Բաժնետիրական Ընկերության (հետայսու՝ «Ընկերություն») և նրա դուստր ընկերությունների (հետայսու՝ «Խումբ») համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են Խմբի՝ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ՄՄՄ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնադրքի» (ՀԷՄՄԽ կանոնադրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

ADVISORY • ASSURANCE • ACCOUNTING • TAX

Baker Tilly Armenia CJSC trading as Bakertilly is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Խմբի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Խմբի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հնկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- o Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- o Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- o Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- o Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա:

Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:


- o Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- o Ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ֆինանսական տեղեկատվության կամ գործունեության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների մասին կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատվություն ենք կրում աուդիտորական աշխատանքների ուղղորդման, վերահսկման ու կատարման համար: Մենք լիովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Աուդիտոր

Մերի Պոնամարևա

29.05.2026թ.



**ՇԱՀՈՒՑԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՑՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

31 դեկտեմբերի 2025թ.-ին ավարտված տարվա համար

	<i>Ծան.</i>	2025թ.	<i>(հազար դրամ)</i> 2024թ.
Հասույթ	5	9,143,115	9,799,432
Վաճառքի ինքնարժեք	6	(8,115,517)	(8,323,568)
Համախառն շահույթ		1,027,598	1,475,864
Իրացման ծախսեր		(40,494)	(43,439)
Վարչական ծախսեր	7	(1,741,407)	(1,744,361)
Այլ եկամուտներ	8	361,965	532,760
Այլ ծախսեր	9	(84,153)	(873,890)
Գործառնական վնաս		(476,491)	(653,066)
Ֆինանսական ծախս, զուտ	10	(282,197)	(187,502)
Ասոցիացված կազմակերպության շահույթի բաժնեմաս	14	67,607	47,608
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս), զուտ		86,009	(98,149)
Վնաս մինչև հարկումը		(605,072)	(891,109)
Շահութահարկի գծով փոխհատուցում/(ծախս)	11	81,913	(505,613)
Զուտ վնաս շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո		(523,159)	(1,396,722)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
<i>Հոդվածներ, որոնք հետագայում կվերադասակարգվեն շահույթին կամ վնասին</i>			
Հիմնական միջոցների վերագնահատման աճ		-	15,690,684
Հետաձգված հարկային պարտավորություն		-	(2,824,323)
Արտերկրյա ստորաբաժանումների ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերություններ		657	590
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		657	12,866,951
Ընդամենը համապարփակ արդյունք		(522,502)	11,470,229

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ


31 դեկտեմբերի 2025թ.-ի դրությամբ

	Ծան.	2025թ.	(հազար դրամ) 2024թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	12	22,473,245	22,317,870
Ոչ նյութական ակտիվներ	13	390,112	438,055
Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	14	5,545,615	6,835,608
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		28,408,972	29,591,533
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	15	693,088	711,544
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	16	1,633,419	1,475,093
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	17	1,308,405	1,710,290
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		3,634,912	3,896,927
Ընդամենը ակտիվներ		32,043,884	33,488,460
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուստներ	18		
Բաժնետիրական կապիտալ		2,472,397	2,472,397
Լրացուցիչ կապիտալ		171,842	171,842
Արտարժույթի փոխարկման պահուստ		123,652	122,995
Վերագնահատման պահուստ		15,563,891	15,874,147
Կուտակված շահույթ		4,797,098	5,010,001
Ընդամենը սեփական կապիտալ		23,128,880	23,651,382
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Պարտավորություններ շահաբաժինների գծով	19	451,676	859,695
Հետաձգված հարկային պարտավորություններ	20	3,185,185	3,267,888
Ակտիվներին վերաբերող շնորհներ		47,514	89,514
Վարկեր և փոխառություններ	21	170,965	-
Վարձակալության գծով պարտավորություններ	22	437,822	13,129
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		4,293,162	4,230,226
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	21	225,168	58,582
Պարտավորություններ շահաբաժինների գծով	19	408,014	368,576
Վարձակալության գծով պարտավորություններ	22	252,321	27,164
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	23	3,735,787	4,264,349
Շահութահարկի գծով պարտավորություն		552	888,181
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		4,621,842	5,606,852
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		32,043,884	33,488,460

Շուշան Ալեքսանյան

Գլխավոր գործադիր տնօրեն

29 մայիսի 2026թ.

Հովհաննես Գաբրիելյան
Ֆինանսական ղեկավարամենտի
ղեկավար/գլխավոր հաշվապահ

ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2025թ-ին ավարտված տարվա համար

	Բաժնետիրական կապիտալ	Լրացույչ կապիտալ	Արտարժույթի փոխարկման պահուստ	Վերագնահատման պահուստ	Կուտակված շահույթ	(հազար դրամ) Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2024թ.	520,993	171,842	122,405	8,294,038	1,708,948	10,818,226
Համապարփակ եկամուտ						
Տարվա վնաս	-	-	-	-	(1,396,722)	(1,396,722)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	590	12,343,945	-	12,344,535
Ընդամենը համապարփակ արդյունք	-	-	590	12,343,945	(1,396,722)	10,947,813
Փոխանցում չբաշխված շահույթին	-	-	-	(4,763,836)	4,763,836	-
Կապիտալում ուղղակիորեն գրանցված գործարքներ սեփականատերերի հետ						
Շահաբաժիններ	-	-	-	-	(66,061)	(66,061)
Բաժնետիրական կապիտալի համալրում	1,951,404	-	-	-	-	1,951,404
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	1,951,404	-	-	-	(66,061)	1,885,343
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	2,472,397	171,842	122,995	15,874,147	5,010,001	23,651,382
Մնացորդը առ 1 հունվարի 2025թ.	2,472,397	171,842	122,995	15,874,147	5,010,001	23,651,382
Համապարփակ եկամուտ						
Տարվա վնաս	-	-	-	-	(523,159)	(523,159)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	657	-	-	657
Ընդամենը համապարփակ արդյունք	-	-	657	-	(523,159)	(522,502)
Փոխանցում չբաշխված շահույթին	-	-	-	(310,256)	310,256	-
Կապիտալում ուղղակիորեն գրանցված գործարքներ սեփականատերերի հետ						
Շահաբաժիններ	-	-	-	-	-	-
Բաժնետիրական կապիտալի համալրում	-	-	-	-	-	-
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	-	-	-	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2025թ.	2,472,397	171,842	123,652	15,563,891	4,797,098	23,128,880

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
31 դեկտեմբերի 2025թ.-ին ավարտված տարվա համար

	(հազար դրամ)	
	2025թ.	2024թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա արդյունք	(523,159)	(1,396,722)
Ճշգրտումներ		
Մաշվածություն, ամորտիզացիա և արժեզրկում	932,619	758,234
Հիմնական միջոցների օտարումից վնաս	6,669	-
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	(42,000)	(42,000)
Ասոցիացված կազմակերպության շահույթի բաժին	(67,607)	(47,608)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի դուրս գրումից կորուստ	39,541	10,527
Ֆինանսական եկամուտ	(422)	(3,821)
Ֆինանսական ծախս	282,619	191,323
Շահութահարկի գծով ծախս	(81,913)	505,613
Փոխարժեքային տարբերությունից զուտ (օգուտ)/վնաս	(86,009)	98,149
Գործառնական արդյունք նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	460,338	73,695
Պաշարների փոփոխություն	18,456	61,039
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(24,698)	(306,701)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	(708,534)	(649,602)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր նախքան շահութահարկի վճարումը	(254,438)	(821,569)
Վճարված շահութահարկ	(888,419)	(220,177)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(1,142,857)	(1,003,969)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(83,105)	(232,301)
Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ելքեր	-	(819,869)
Բաժնետոմսերի օտարումից մուտքեր	1,357,600	-
Ստացված տոկոսային եկամուտ	422	3,821
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	1,274,917	(1,048,349)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Բանկային օվերդրաֆտների զուտ շարժ	131,450	(119,603)
Վճարված տոկոսներ	(71,007)	(1,212)
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	(222,951)	(37,933)
Շահաբաժինների վճարում	(500,000)	(573,073)
Բաժնետիրական կատիտալի համալրում	-	1,951,404
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(662,508)	1,219,583
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ նվազում	(530,448)	(870,512)
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների վրա	128,563	(122,247)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	1,710,290	2,703,049
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	1,308,405	1,710,290

**ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

31 դեկտեմբերի 2025թ.-ին ավարտված տարվա համար

1. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերությունը («Մայր ընկերություն», դուստր ընկերությունների հետ միասին՝ «խումբ») ստեղծվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ 1994թ.-ին:

Մայր ընկերության միակ բաժնետերը Հայաստանի Հանրապետությանն է՝ ի դեմս ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության:

Մայր ընկերությունը հանդիսանում է փոստային կապի ազգային օպերատորը, որի գործունեությունը կարգավորում է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը: Մայր ընկերությանը պատվիրակված է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում ապահովելու փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցումը, ինչպես նաև Համաշխարհային փոստային միության ակտերից բխող պարտավորությունների կատարումը:

Մայր ընկերության հիմնական ծառայություններն են՝

- ներհանրապետական և միջազգային փոստային կապի ծառայություններ,
- կենսաթոշակների և նպաստների վճարման և բաժանման ծառայություններ,
- տարատեսակ վճարումների հավաքագրման ծառայություններ՝ կոմունալ և ինտերնետի ծառայությունների, հարկերի, տուգանքների և տուրքերի հավաքագրման ծառայություններ,
- ինչպես նաև արագ դրամական փոխանցումների ծառայություններ:

Մայր ընկերությունն ունի չորս դուստր ընկերություններ՝ «Հայփոստ Յու Էս Էյ Կորպորացիա», «Հայփոստ Ռիթեյլ» ՓԲԸ, «Այնովեյշն» ՓԲԸ և «ԷՅՉՓԻ ԼՈՋԻՍՏԻԿՍ» ՓԲԸ, որոնց բաժնեմասերը ամբողջությամբ իրեն են պատկանում:

«Հայփոստ Յու Էս Էյ Կորպորացիա» դուստր ընկերությունը գրանցվել է 2014թ. ապրիլի 14-ին, իսկ «Հայփոստ Ռիթեյլ» ՓԲԸ և «Այնովեյշն» ՓԲԸ՝ 2021թ. փետրվարի 3-ին, «ԷՅՉՓԻ ԼՈՋԻՍՏԻԿՍ» ՓԲԸ դուստր ընկերությունը՝ 10 մայիսի 2021թ.:

«Հայփոստ Յու Էս Էյ Կորպորացիա» դուստր ընկերության հիմնական գործունեության ուղղություններն են՝

- 1) ԱՄՆ Էլեկտրոնային առևտրի կայքերից ապրանքների վերաուղարկումը Հայաստանի Հանրապետություն գնորդների Հայաստանյան հասցեներին,
- 2) ԱՄՆ-Հայաստան ծանրոցների առաքման ծառայությունը,
- 3) ԱՄՆ-ից Հայկական նամականիշերի միջազգային վաճառքի կազմակերպումը,
- 4) ԱՄՆ-ում Հայկական արտադրության ապրանքների, զրքերի ու տպագիր այլ հրատարակչությունների վաճառքը,
- 5) ԱՄՆ-ից Հայաստան դրամական փոխանցումների կազմակերպումը՝ RIA Money Transfer համակարգի միջոցով:

«Հայփոստ Ռիթեյլ» ՓԲԸ հիմնականում ձեռք է բերում ապրանքներ և հանձնարարում Մայր ընկերությանը իր անունից և իր հաշվին կազմակերպել և իրականացնել իրեն պատկանող ապրանքների իրացում «Հայփոստ» ՓԲԸ փոստային ցանցի միջոցով:

«Այնովեյշն» ՓԲԸ մշակում է գործառնական բազմաֆունկցիոնալ համակարգչային ծրագրեր և օգտագործման իրավունքով փոխանցում Մայր ընկերությանը, մատուցում ծրագրերի տեխնիկական աջակցման ծառայություններ:

«ԷՅՉՓԻ ԼՈՋԻՍՏԻԿՍ» ՓԲԸ դուստր ընկերությունը հիմնադրվել է 2021թ.-ին: Այն հիմնվել է, որպեսզի ոչ միայն «Հայփոստ» ՓԲԸ-ին լոգիստիկ ծառայություններ մատուցի, այլ նաև հետագայում արտապատվիրակված ծառայություններ մատուցի այլ կազմակերպությունների՝ ներդնելով լոգիստիկ նոր և որակյալ ստանդարտներ:

Խումբը ներկայումս գործունեությունն իրականացնում է իր 777 (2024թ.՝ 783) փոստային բաժանմունքների միջոցով՝ քաղաքային շրջաններից մինչև ամենահեռավոր գյուղական շրջաններում: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի աշխատակիցների ցուցակային թիվը կազմել է 3,251 մարդ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3,152 մարդ):

Մայր ընկերության իրավաբանական հասցեն է ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց 65/5, «Հայփոստ Ռիթեյլ» ՓԲԸ, «Այնովեյշն» ՓԲԸ, «ԷՅՉՓԻ ԼՈՋԻՍՏԻԿՍ» ՓԲԸ դուստր ընկերությունների իրավաբանական հասցեներն են ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի պ. 1-ին նրբ. 1 շենք:

«Հայփոստ Յու Էյ Կորպորացիա» դուստր ընկերությունը գրանցված է ԱՄՆ, Կալիֆորնիա, ք. Գլենդել, Նորթ Բրենդ բուլվար 124 հասցեում:

2. ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

2.1 Համապատասխանություն

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից հրապարակված՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Չափման հիմունքներ

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքով:

2.2 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Խմբի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Խմբի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.3 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Խմբի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 23-ում:

2.4 Դուստր ընկերություններ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված են հետևյալ դուստր ընկերությունները.

Դուստր ընկերություն	Մասնաբաժին 2025թ.	Մասնաբաժին 2024թ.	Գրանցման երկիր	Գրանցման ամսաթիվ
«Հայփոստ Յու Էս Էյ Կորպորացիա»	100%	100%	ԱՄՆ	14 ապրիլի 2014թ.
«Հայփոստ Ռիթեյլ» ՓԲԸ	100%	100%	Հայաստան	3 փետրվարի 2021թ.
«Այնովեյշն» ՓԲԸ	100%	100%	Հայաստան	3 փետրվարի 2021թ.
«ԷՅՉՓԻ ԼՈՋԻՍՏԻԿՍ» ՓԲԸ	100%	100%	Հայաստան	10 մայիսի 2021թ.

3. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետևյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողաբար կիրառվել է սույն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր տարիների համար և Խմբի ֆինանսական վիճակի ներկայացման ժամանակ: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է Խմբի բոլոր ընկերությունների կողմից:

3.1 Համախմբման հիմքերը

Դուստր ընկերություններն այն կազմակերպություններն են, որոնք վերահսկվում են Խմբի կողմից: Վերահսկողությունն առկա է, երբ Խումբը կարող է դեկլարել կազմակերպության գործունեության ֆինանսական և գործառնական քաղաքականությունը՝ նրա գործունեությունից օգուտ ստանալու համար:

Տարվա ընթացքում ձեռք բերված կամ օտարված դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվություններն ընդգրկված են Համախմբված համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ սկսած վերահսկողության սահմանման ամսաթվից մինչև վերահսկողության դադարեցման ամսաթիվը: Ներխմբային հաշվեկշիռները և ներխմբային գործարքներից չիրացված եկամուտներն ու ծախսերը դուրս են հանվում համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ:

Անհրաժեշտության դեպքում ճշգրտումներ են արվում դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվություններում՝ դրանց քաղաքականությունները Խմբի այլ անդամների կողմից կիրառվող քաղաքականությանը համապատասխանեցնելու համար:

3.2 Հասույթի ճանաչում

Հասույթը սովորական գործունեության ընթացքում տրամադրված ապրանքի և ծառայությունների համար ստացվելիք գումարն է որը Խումբն ակնկալում է ստանալ գնորդին խոստացված ապրանքները կամ ծառայությունները փոխանցելու դիմաց, բացառությամբ երրորդ կողմերի անունից հավաքագրված գումարները և չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցումների իրական արժեքով՝ հանած գեղչերը և վաճառքի հետ կապված հարկերը:

Հասույթի ճանաչումը իրականացվում է հետևյալ քայլերով .

- Որոշակիացվում է գնորդի հետ պայմանագիրը,
- Որոշակիացվում են պայմանագրի կատարման պարտականությունները (գնորդին փոխանցման ենթակա առանձնացվող ապրանքը կամ ծառայությունը, կամ դրանց առանձնացվող խումբը),
- Գնահատվում է գործարքի զինը (հաշվի են առնվում փոփոխական հատուցումները, նշանակալի ֆինանսավորման բաղադրիչը, ոչ դրամային հատուցումները և գնորդներին վճարման ենթակա հատուցումները),

- Գործարքի գինը բաշխվում է կատարման պարտականություններին (առանձին վաճառքի գների համամասնությամբ),
- ճանաչվում է հասույթ յուրաքանչյուր կատարման պարտականության գծով առանձին (կատարման պարտականության կատարման ընթացքում կամ ավարտին՝ ըստ ստորև ներկայացվածի):
Ընկերությունը չի հաշվարկում նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ, եթե հասույթի ճանաչման և վճարման միջև ընկած ժամանակահատվածը չի գերազանցում 12 ամիսը:
Խմբի կողմից ստացված հասույթի ճանաչումը կատարվում է հետևյալ հիմունքով.

Ապրանքի վաճառք

Ապրանքի վաճառքը ճանաչվում է ապրանքի սեփականության հետ կապված էական ռիսկերը և սեփականությունից ստացվող օգուտները հաճախորդին փոխանցելուց հետո, ինչը սովորաբար տեղի է ունենում, երբ Խումբը վաճառում կամ առաքում է ապրանքը հաճախորդին, հաճախորդն ընդունում է ապրանքը, և համապատասխան դեբիտորական պարտքի հավաքագրելիությունը հիմնավորված է:

Ծառայությունների մատուցում

Ծառայությունների մատուցումից հասույթը ճանաչվում է կատարման պարտականությունը կատարելուն զուգընթաց, եթե հաճախորդը ստանում է օգուտները կազմակերպության կողմից կատարված (բավարարված) կատարման պարտականության կատարմանը համընթաց: Կատարման առաջընթացը գնահատվում է որպես փաստացի մատուցված ծառայության և մատուցվող ամբողջ ծառայության հարաբերակցություն:

Այն դեպքում, երբ ծառայության մատուցման ընթացքում հաճախորդը չի ստանում և սպառում օգուտները միաժամանակ կամ չի ստեղծվում հաճախորդի կողմից վերահսկվող ակտիվ կամ Խմբի կողմից չվերահսկվող պատճառներով ծառայության անավարտ մնալու պարագայում Խումբը չունի անավարտ մատուցված ծառայության գծով գումարներ գանձելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, հասույթը ճանաչվում է ծառայության մատուցման ավարտին:

3.3 Ֆինանսական եկամուտ և ծախս

Խմբի ֆինանսական եկամուտներն ու ծախսերը կազմված են հետևյալից.

- Տոկոսային եկամուտ
- Տոկոսային ծախս
- Ֆինանսական ակտիվների ու ֆինանսական պարտավորությունների գծով փոխարժեքային տարբերություններից առաջացող գուտ օգուտ կամ վնաս

Տոկոսային եկամուտը կամ ծախսը ճանաչվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը:

Որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը անմիջականորեն վերագրելի փոխառության ծախսումները այդ ակտիվի արժեքի մասն են կազմում (կապիտալացվում են):

3.4 Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը. 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 381.36 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 449.01 ՀՀ դրամ, 1 ՀՓԻ (հատուկ փոխառության իրավունք)՝ 522.47 (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 396.56 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 413.89 ՀՀ դրամ, 1 ՀՓԻ՝ 517.17): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը), բացառությամբ իրական արժեքով

հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոգվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոգվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

Դուստր ընկերության ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկումն այլ արժույթով

«Հայփոստ Յու Էս Էյ Կորպորացիա» դուստր ընկերության ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են ԱՄՆ դոլարից դրամի՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող փոխարժեքով: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 381.36 ՀՀ դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 396.56 ՀՀ դրամ): Եկամտային և ծախսային հոգվածները վերահաշվարկվում են՝ օգտագործելով ժամանակաշրջանի միջին փոխարժեքը: 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար 1 ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքը կազմում էր 386.82 ՀՀ դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար 1 ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքը կազմում էր 392.66 ՀՀ դրամ), մինչդեռ սեփական կապիտալի հաշիվները վերահաշվարկվում են գործարքի օրվա պատմական փոխարժեքով: Փոխարժեքային տարբերությունների արդյունքը գրանցվում է անմիջապես այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և ներկայացվում սեփական կապիտալում՝ արտարժույթի փոխարկման պահուստում:

3.5 Հիմնական միջոցներ

Խմբի հիմնական միջոցների բոլոր դասերը ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացված են վերագնահատված արժեքով, որն իրենից ներկայացնում է վերագնահատման օրվա դրությամբ հիմնական միջոցի իրական արժեքը՝ հանած հետագա կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Ցանկացած կուտակված մաշվածություն վերագնահատման օրը բացառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից, և ակտիվի վերագնահատված արժեքում ներկայացվում է զուտ արժեքը: Վերագնահատումներն իրականացվում են բավարար պարբերականությամբ այնպես, որ հաշվեկշռային արժեքն էականորեն չտարբերվի հաշվետու ամսաթվի դրությամբ իրական արժեքից:

Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճը վերագրվում է այլ համապարփակ եկամուտներին և արտացոլվում է սեփական կապիտալում՝ որպես վերագնահատման պահուստ: Մակայն, եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, այն ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ որպես եկամուտ այն չափով, որով նախկինում նվազումը ճանաչվել էր որպես ծախս: Երբ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն չափով, որը գերազանցում է նույն ակտիվի գծով նախորդ վերագնահատումից առաջացած վերագնահատման աճի մնացորդը:

Վերագնահատումից աճը ճանաչվում է կուտակված շահույթում Խմբի կողմից ակտիվի օգտագործմանը զուգահեռ: Կուտակված շահույթում ճանաչված վերագնահատումից աճը իրենից ներկայացնում է ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության տարբերությունը: Վերագնահատված հիմնական միջոցի միավորի իրացման կամ դուրսգրման դեպքում վերագնահատման պահուստում դրա գծով առկա վերագնահատումից աճը ուղղակիորեն վերագրվում է կուտակված շահույթին:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ

պահպանման և վերանորոգման, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների միավորի յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այդ մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Հոդատարածքի գծով մաշվածություն չի հաշվառվում:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	-10-55 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	-1-10 տարի
Տրանսպորտային միջոցներ	-5-12 տարի
Տնտեսական գույք և այլ	-1-8 տարի:

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և, անհրաժեշտության դեպքում, ճշգրտվում:

3.6 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Խմբի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են ակտիվի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 2-7 տարի լիցենզիաների և ապրանքային նշանների համար և 5-10 տարի համակարգչային ծրագրերի համար:

Ամորտիզացիայի հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտին և, անհրաժեշտության դեպքում, ճշգրտվում:

3.7 Պաշարներ

Պաշարները չափվում են սկզբնական արժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հաշվարկվում է միջին կշռված արժեքի սկզբունքով և ներառում է պաշարների ձեռքբերման ծախսումները, արտադրական կամ փոխարինման ծախսումները և դրանք ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումները: Արտադրված պաշարների և անավարտ արտադրանքի դեպքում սկզբնական արժեքը ներառում է արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը՝ հիմք ընդունելով արտադրական նորմատիվային հզորությունը:

Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար ծախսումները:

3.8 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և սկզբնական չափում

Առևտրական դեբիտորական պարտքերի սկզբնական ճանաչումը տեղի է ունենում դրանց առաջացման օրը՝ իրացումից հասույթի ճանաչման պահին: Մյուս բոլոր ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում, երբ Խումբը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Ֆինանսական ակտիվի (եթե այն առևտրական դեբիտորական պարտք չէ, որը չի պարունակում էական ֆինանսավորման բաղկացուցիչ) կամ ֆինանսական պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով՝ գումարած կամ հանած, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող միավորի համար, գործիքի ձեռքբերմանը կամ թողարկմանն ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումները: Էական ֆինանսավորման բաղադրիչ չպարունակող առևտրական դեբիտորական և կրեդիտորական պարտքի սկզբնական չափումն իրականացվում է գործարքի գնով:

Դասակարգում և հետագա չափում

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ պարտքային ներդրումների համար, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ բաժնային ներդրումների համար, կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Խումբը փոխում է ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը, որի դեպքում բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց վրա ազդում է այդ փոփոխությունը, վերադասակարգվում են բիզնես մոդելի փոփոխությանը հաջորդող առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրը:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և նախատեսված չէ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական միջոցների հոսքեր հավաքագրելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացում են դրամական միջոցների հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ:

Պարտքային ֆինանսական ակտիվը չափվում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքով չափվող, եթե բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և նախատեսված չէ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է և՛ պահել ակտիվը պայմանագրային դրամական միջոցների հոսքեր հավաքագրելու համար, և՛ վաճառելու համար, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ:

Առևտրական նպատակներով չափվող բաժնային գործիքում ներդրման սկզբնական ճանաչման ժամանակ Խումբը կարող է անդառնալիորեն որոշել ներկայացնել ներդրման իրական արժեքի հետագա փոփոխություններն այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այս ընտրությունը կատարվում է առանձին՝ յուրաքանչյուր ներդրման համար:

Բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք դասակարգված չեն որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող, ինչպես ներկայացված է վերը, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Այս ակտիվները ներառում են բոլոր ածանցյալ ֆինանսական ակտիվները: Սկզբնական ճանաչման պահին Խումբը կարող է անդառնալիորեն նախատեսել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափման պահանջները, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանա:

Ֆինանսական ակտիվներ – Բիզնես մոդելի գնահատում

Խումբը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակներում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեության կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Գնահատման ժամանակ դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունն ուղղված է պամանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացմանը, տոկոսադրույքների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների մարման ժամկետների համապատասխանեցմանը համապատասխան պարտավորությունների մարման ժամկետներին կամ դրամական միջոցների ակնկալվող արտահոսքին, կամ դրամական միջոցների հոսքերի իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով:
- ինչպես է գնահատվում պորտֆելի եկամտաբերությունը և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում Խմբի ղեկավարությանը:
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ֆինանսական ակտիվների) արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:

Ֆինանսական ակտիվների փոխանցումը երրորդ կողմերին այնպիսի գործարքներում, որոնք չեն բավարարում ապաճանաչման պայմանները, չի դիտարկվում որպես վաճառք այս նպատակի համար, և Խումբը շարունակում է ճանաչել ակտիվները:

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրական նպատակների համար կամ կառավարվում են և որոնց ստեղծած արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով:

Ֆինանսական ակտիվներ – Գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխառության հետ կապված այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի), ինչպես նաև շահույթի մարժայի հատուցում:

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, Խումբը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այստեղ ներառվում է այն գնահատումը, թե արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական միջոցների

Ժամկետը կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը: Այս գնահատումն իրականացնելիս Խումբը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական միջոցների գումարը կամ ժամկետները,
- վաղաժամկետ մարման և գործողության ժամկետի երկարաձգման պայմանները:

Վաղաժամկետ մարման պայմանը համապատասխանում է միայն մայր գումարի և տոկոսների վճարում հանդիսանալու չափանիշին, եթե վաղաժամկետ մարման գումարը, ըստ էության, իրենից ներկայացնում է մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների չվճարված գումարները, որոնք կարող են ներառել լրացուցիչ ողջամիտ հատուցում պայմանագրի վաղաժամկետ դադարեցման համար: Բացի այդ, պայմանագրի անվանական արժեքի գեղչով կամ հավելավճարով ձեռքբերված ֆինանսական ակտիվի համար վաղաժամկետ մարում թույլատրող կամ պահանջող պայմանն այն գումարի չափով, որն, ըստ էության, իրենից ներկայացնում է պայմանագրի անվանական արժեքը գումարած հաշվեգրված (սակայն չվճարված) պայմանագրային տոկոսները (կարող են ներառել լրացուցիչ ողջամիտ հատուցում պայմանագրի վաղաժամկետ դադարեցման համար), դիտարկվում է որպես նշված չափանիշին համապատասխանող, եթե վաղաժամկետ մարման պայմանի իրական արժեքն էական չէ սկզբնական ճամնաչման պահին:

Ֆինանսական ակտիվներ – Հետագա չափում, շահույթ և վնաս

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Այս ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ամորտիզացված արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորստի չափով: Տոկոսային եկամուտը, փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը և վնասը և արժեզրկումից կորուստները և հակադարձումները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական պարտավորություններ – Դասակարգում, հետագա չափում, շահույթ և վնաս

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող: Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե այն դասվում է առևտրական նպատակներով պահվող գործիքների դասին, հանդիսանում է ածանցյալ գործիք կամ նախատեսված է որպես այդպիսին սկզբնական ճանաչման պահին: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները չափվում են իրական արժեքով, իսկ դրանց գծով զուտ շահույթը և վնասը, ներառյալ՝ տոկոսային ծախսը, ճանաչվում են շահույթում կամ վնասում: Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային ծախսը և փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը և վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող ցանկացած շահույթը կամ վնասը նույնպես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների փոփոխություն

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոխվում են, Խումբը գնահատում է, թե արդյոք փոփոխված ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխություն»), ապա սկզբնական

ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ՝ իրական արժեքով:

Խումբն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, թե արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինող ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերից: Խումբը գնահատում է փոփոխության նշանակալի լինելը քանակական և որակական գործոնների հիման վրա հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Խումբը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Խումբը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է ելնելով հետևյալ որակական գործոններից.

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,
- ժամկետի կամ տոկոսադրույքի զգալի փոփոխություն,
- գրավի կամ ապահովվածության այլ միջոցների փոփոխություն:

Եթե ամորտիզացված արժեքով հաշվառվող փոփոխված ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր չեն, փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը: Այս դեպքում, Խումբը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտումից առաջացող գումարը ճանաչում է որպես փոփոխության գծով շահույթ կամ վնաս՝ շահույթի կամ վնասի կազմում: Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը վերահաշվարկվում է որպես ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով գեղչված, վերանայված կամ փոփոխված պայմանագրային դրամական միջոցների ներկա արժեք: Ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճշգրտում են փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում են փոփոխված ֆինանսական ակտիվի գործողության մնացած ժամկետի ընթացքում:

Ֆինանսական պարտավորություններ

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պայմաններով պարտավորության գծով դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե փոփոխությունը (կամ փոխարինումը) չի հանգեցնում ֆինանսական պարտավորության ապաճանաչմանը, Խումբը կիրառում է այն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, համաձայն որի ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, երբ փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման, այսինքն, Խումբը ճանաչում է փոփոխության (կամ փոխարինման) արդյունքում առաջացող ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի ճշգրտումը շահույթում կամ վնասում փոփոխության (կամ փոխարինման) ամսաթվի դրությամբ:

Գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունների գծով դրամական միջոցների հոսքերի փոփոխությունները չեն համարվում փոփոխություն, եթե հանդիսանում են գործող պայմանագրային պայմանների արդյունք:

Խումբն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Խումբը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ ապահովվածության այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման պայմանի ավելացում,
- ժամկետի կամ տոկոսադրույքի զգալի փոփոխություն,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմանների համաձայն դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ՝ վճարված և ստացված վճարները՝ զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության գծով մնացած դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքից: Եթե պարտքային գործիքների փոխարինումը կամ վերջիններիս պայմանների փոփոխությունը հաշվառվում է որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճանաչվում են որպես մարումից շահույթի կամ վնասի մաս: Եթե փոխարինումը կամ պայմանների փոփոխությունը չի հաշվառվում որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճշգրտում են պարտավորության հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում են փոփոխված պարտավորության գործողության մնացած ժամկետի ընթացքում:

Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Խումբն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում, Խումբը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում վերահսկողությունը ֆինանսական ակտիվի նկատմամբ:

Խումբն իրականացնում է գործարքներ, որոնց շրջանակներում փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված կամ բոլոր, կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

Ֆինանսական պարտավորություններ

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է: Խումբը նաև ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորությունից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են, որի դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով:

Ֆինանսական պարտավորության ապահանջման ժամանակ մարված հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ՝ փոխանցված ոչ դրամային ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները հաշվանցվում են և ներկայացվում են գուտ գումարով ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում միայն այն դեպքում, երբ Խումբն ունի գումարները հաշվանցելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը գուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

3.9 Արժեզրկում

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մշակող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի գուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվների արժեզրկում

ՖՀՄՍ 9-ով սահմանված է ֆինանսական ակտիվների «սպասվող պարտքային վնասի» մոդելը: Արժեզրկման մոդելը կիրառելի է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների, պայմանագրային ակտիվների, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային գործիքներում ներդրումների և դեբիտորական պարտքերի համար:

ՖՀՄՍ 9-ի արժեզրկման մոդելի գործողության ոլորտում գտնվող ակտիվների համար սովորաբար ակնկալվում է, որ արժեզրկումից կորուստները կաճեն և կդառնան առավել փոփոխական:

Խումբը չափում է վնասի գծով պահուստը ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասին հավասար գումարի չափով, բացառությամբ հետևյալ

գործիքների, որոնց համար վնասի գծով պահուստը չափվում է 12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնասին հավասար գումարի չափով.

- (i) պարտքային արժեթղթեր, եթե որոշվել է, որ դրանք ունեն ցածր պարտքային ռիսկ հաշվետու ամսաթվի դրությամբ և
- (ii) այլ պարտքային արժեթղթեր և բանկային հաշիվների մնացորդներ, որոնց գծով պարտքային ռիսկը (օրինակ, ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի ընթացքում պարտականությունների չկատարման ռիսկ) էականորեն չի աճել սկզբնական ճանաչման պահից:

Առևտրական դեբիտորական պարտքերի և պայմանագրային ակտիվների վնասի գծով պահուստը միշտ չափվում է ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասին հավասար գումարի չափով:

Երբ Խումբը որոշում է, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչումից հետո և երբ գնահատում է սպասվող պարտքային վնասը, այն դիտարկում է ողջամիտ և հիմնավորված տեղեկատվությունը, որը տեղին է և հասանելի առանց անհարկի ծախսերի կամ ջանքերի: Գնահատումը ներառում է թե՛ քանակական և թե՛ որակական տվյալները, ինչպես նաև Խմբի նախկին փորձի և պարտքի հիմնավորված գնահատման վրա հիմնված վերլուծությունը և ներառում է հեռանկարի վերաբերյալ տեղեկատվությունը:

Խումբը ենթադրում է, որ տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի էական աճ, եթե այն ավելի քան 60 օր ժամկետանց է:

Խումբը համարում է, որ ֆինանսական ակտիվի գծով պարտականությունները չեն կատարվել, եթե՝

- (i) հավանական չէ, որ փոխառուն ամբողջությամբ կկատարի պարտքի հետ կապված իր պարտականությունները, եթե Խումբը չձեռնարկի այնպիսի գործողություններ, ինչպիսին գրավի իրացումն է (վերջինիս առկայության դեպքում), կամ
- (ii) ֆինանսական ակտիվն ավելի քան 90 օր ժամկետանց է:

Ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է այն սպասվող պարտքային վնասը, որն առաջանում է պարտավորությունների չկատարման բոլոր հնարավոր դեպքերի արդյունքում ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ամբողջ ժամկետի ընթացքում:

12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է սպասվող պարտքային վնասի այն մասը, որն առաջանում է պարտավորությունների չկատարման այն դեպքերի արդյունքում, որոնք հնարավոր են հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում (կամ ավելի կարճ ժամկետի ընթացքում, եթե գործիքի ակնկալվող գործողության ամբողջ ժամկետը պակաս է 12 ամսից):

Սպասվող պարտքային վնասի գնահատման ժամանակ դիտարկվող առավելագույն ժամկետն իրենից ներկայացնում է առավելագույն պայմանագրային ժամկետը, որի ընթացքում Խումբը ենթարկվում է պարտքային ռիսկի:

Սպասվող պարտքային վնասի չափում

Սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է պարտքային վնասի հավանականությունից ելնելով կշռված պարտքային վնասի գնահատականը: Պարտքային վնասը չափվում է որպես բոլոր պակասող դրամական միջոցների ներկա արժեք (այսինքն՝ որպես տարբերություն այն դրամական միջոցների հոսքերի միջև, որոնք Խումբը պետք է ստանա պայմանագրի համաձայն, և որոնք ակնկալվում է ստանալ):

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Խումբը գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային արժեթղթերը պարտքային առումով արժեզրկված լինելու տեսանկյունից: Ֆինանսական ակտիվը համարվում է պարտքային առումով արժեզրկված, եթե տեղի են ունեցել մեկ կամ ավելի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի գծով գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի պարտազանցման (դեֆոլտի) վկայությունը ներառում է հետևյալ դիտարկելի տվյալները.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, այդ թվում՝ պարտականությունների չկատարումը կամ վճարման ավելի քան 180 օր ուշացումը,
- Խմբի կողմից փոխառության կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Խումբն այլ պայմաններում չէր դիտարկի,
- փոխառուի հավանական սնանկացումը կամ այլ ֆինանսական վերակազմավորումը կամ
- արժեթղթի համար գործող շուկայի վերացումը ֆինանսական դժվարությունների պատճառով:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով տոկոսային եկամուտը հաշվեզրկվում է զուտ հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Սպասվող պարտքային վնասի ներկայացումը համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների վնասի գծով պահուստը նվազեցվում է այդ ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքով վերաչափվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումները չեն նվազեցվում հաշվեկշռային արժեքից, այլ ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում և ներկայացվում են սեփական կապիտալում որպես պահուստ:

Դուրսգրում

Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում, եթե Խումբը չունի ողջամիտ հիմքեր ակնկալելու ֆինանսական ակտիվի ամբողջական կամ մասնակի փոխհատուցումը: Խումբը չի ակնկալում դուրս գրված գումարների էական փոխհատուցում: Այնուամենայնիվ, դուրս գրված ֆինանսական ակտիվները կարող են դեռևս հանդիսանալ կատարողական գործողությունների առարկա՝ հասանելիք գումարների փոխհատուցման հետ կապված Խմբի ընթացակարգերի հետ համապատասխանությունն ապահովելու համար:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Խումբն այս ակտիվները դիտարկում է արժեզրկման վկայության առանձին և հավաքական հիմունքներով: Բոլոր առանձին վերցված նշանակալի ակտիվները գնահատվում են արժեզրկման տեսանկյունից՝ առանձին հիմունքով: Արժեզրկման առանձին վկայություն չհայտնաբերելու դեպքում, այս ակտիվները գնահատվում են հավաքական հիմունքով՝ տեղի ունեցած, սակայն չբացահայտված արժեզրկման վկայություն հայտնաբերելու նպատակով:

Ակտիվները, որոնք առանձին վերցված նշանակալի չեն, գնահատվում են արժեզրկման տեսանկյունից հավաքական հիմունքով՝ խմբավորելով ռիսկի համանման բնութագրերով ակտիվները:

Հավաքական արժեզրկումը գնահատելիս Խումբը դիտարկում է փոխհատուցման ժամկետների և կրած վնասի գումարի նախորդ ժամանակաշրջանների տեղեկատվությունը և կատարում է ճշգրտում, եթե ընթացիկ տնտեսական և վարկավորման պայմանները թույլ են տալիս, որպեսզի փաստացի վնասն ավել կամ պակաս լինե՞ր նախկինում առկա միտումներով առաջարկվողներից:

Արժեզրկումից կորուստը հաշվարկվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույթով զեղչված դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն: Կորստի գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ պահուստային հաշվում: Եթե Խումբը գտնում է, որ չկա ակտիվը փոխհատուցելու իրատեսական հնարավորություն, համապատասխան գումարները դուրս են գրվում: Եթե հետագայում տեղի ունեցած դեպքը հանգեցնում է արժեզրկումից կորստի գումարի նվազեցմանը և այդ նվազեցումը կարելի է անկողմնակալորեն վերագրել արժեզրկման ճանաչումից հետո տեղի ունեցած դեպքին, ապա արժեզրկումից կորստի գումարի նվազեցումը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով:

3.10 Վարձակալություն

Որևէ նոր պայմանագրի կնքման ժամանակ Խումբը գնահատում է, թե արդյո՞ք պայմանագիրը վարձակալական է կամ պարունակում է վարձակալություն: Պայմանագիրը վարձակալական է կամ պարունակում է վարձակալության իրավունք, եթե այն փոխանցում է, փոխհատուցման դիմաց, հիմքում ընկած ակտիվի օգտագործումը տվյալ ժամանակահատվածում վերահսկելու իրավունքը: Ստուգելու համար, թե արդյո՞ք պայմանագիրը փոխանցում է առանձնացված ակտիվի օգտագործումը վերահսկելու իրավունքը, Խումբն օգտագործում է ՖՀՄՄ 16-ի վարձակալության սահմանումը, ըստ որի վարձակալություն գոյություն ունի, եթե.

- պայմանագիրը պարունակում է որոշակիացված ակտիվ, որը կա՛մ հստակ սահմանված է պայմանագրում, կա՛մ սահմանվում է անուղղակի վկայության հիման վրա՝ որոշակիացվելով այն պահին, երբ ակտիվը դառնում է հասանելի Խմբին,

- Խումբն իրավունք ունի ստանալու որոշակիացված ակտիվի օգտագործումից, ըստ էության, բոլոր տնտեսական օգուտները օգտագործման ողջ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով նրա՝ պայմանագրի որոշակի շրջանակում իրավունքները,

- Խումբն իրավունք ունի օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ուղղորդելու որոշակիացված ակտիվի օգտագործումը՝ հաշվի առնելով խելամիտ սահմանափակումները:

Խումբը որպես վարձակալ

Խումբը կիրառում է ճանաչման և չափման միասնական մոտեցում բոլոր վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների: Խումբը ճանաչում է վարձակալության գծով պարտավորություններ՝ վարձակալության գծով վճարումներ կատարելու համար, և օգտագործման իրավունքով ակտիվներ, որոնք ներկայացնում են հիմքում ընկած ակտիվներն օգտագործելու իրավունքը:

Օգտագործման իրավունքով ակտիվներ

Խումբը ճանաչում է օգտագործման իրավունքով ակտիվներ վարձակալության սկզբնական ամսաթվի դրությամբ (այն ամսաթիվը, երբ հիմքում ընկած ակտիվը հասանելի կլինի օգտագործման համար): Օգտագործման իրավունքով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկման կորուստները, և ճշգրտվում են վարձակալության գծով

պարտավորության ցանկացած վերաչափման պարագայում: Օգտագործման իրավունքով ակտիվների սկզբնական արժեքը ներառում է վարձակալության գծով ճանաչված պարտավորությունների գումարը, սկզբնական ուղղակի ծախսումները, վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձակալության վճարները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսավճարներ: Բացառությամբ այն դեպքերի, երբ Խումբը խելամտորեն համոզված է, որ ձեռք կբերի վարձակալված ակտիվի նկատմամբ սեփականության իրավունքը պայմանագրի ավարտին, օգտագործման իրավունքով ակտիվի մաշվածությունը հաշվարկում է գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից և վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Օգտագործման իրավունքով ակտիվները ենթակա են արժեզրկման:

Վարձակալության գծով պարտավորություններ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ Խումբը ճանաչում է վարձակալության գծով պարտավորությունը վարձակալության ժամկետի ընթացքում վճարման ենթակա վարձավճարների ներկա արժեքով: Վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումները (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, և գումարներ, որոնք ակնկալվում է, որ կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո: Վարձավճարները ներառում են նաև գնման օպցիոնի իրագործման գինը, երբ Խումբը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, և վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումները, եթե վարձակալության ժամկետն արտացոլում է Խմբի՝ վարձակալությունը դադարեցնելու օպցիոնի իրագործումը: Փոփոխուն վարձավճարները, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքից, ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի է ունենում այդ վճարումներին հանգեցնող դեպքը կամ իրավիճակը:

Վարձավճարների ներկա արժեքի հաշվարկման ժամանակ Խումբն օգտագործում է վարձակալության սկզբնական ամսաթվին լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, եթե վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել: Մեկնարկի ամսաթվից հետո վարձակալության գծով պարտավորության գումարը ավելացվում է՝ վարձակալության գծով պարտավորության տոկոսը արտացոլելու համար, և նվազեցվում է՝ կատարված վարձավճարները արտացոլելու համար: Ավելին, վարձակալության գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը վերաչափվում է, եթե տեղի են ունենում վերափոխումներ, վարձակալության ժամկետի փոփոխություն, ըստ էության հաստատուն վարձավճարների փոփոխություն կամ հիմքում ընկած ակտիվի գնման օպցիոնի գնահատումներում փոփոխություն:

Կարճաժամկետ վարձակալություններ և փոքրարժեք ակտիվների վարձակալություններ

Խումբը բացառում է օգտագործման իրավունքով ակտիվների, ինչպես նաև կարճաժամկետ վարձակալության և փոքրարժեք ակտիվների վարձակալության գծով պարտավորությունների ճանաչումը: Խումբը ճանաչում է այդ վարձակալությունների հետ կապված վարձավճարները որպես ծախս՝ գծային հիմունքով, վարձակալության ժամկետի ընթացքում:

3.11 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Խումբը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե զեղչման ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելով հարկումից առաջ այն դրույքով, որն արտացոլում է տվյալ շուկայում փողի ժամանակային արժեքը և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Զեղչի ծախսագրումը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

3.12 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գույքի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք կապված են դուստր ընկերություններում և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների ու համատեղ ձեռնարկումներում մասնակցությունների հետ, բացառությամբ այն դեպքերի, որտեղ Խումբն ի վիճակի է վերահսկելու ժամանակավոր տարբերության հակադարձումը, և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի տեսանելի ապագայում: Նմանատիպ ներդրումների և մասնակցությունների հետ կապված նվազեցվող ժամանակավոր տարբերություններից առաջացող հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է հարկվող շահույթի առկա լինելը, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը, և որը կմարվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Խումբը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Խումբը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Խումբը մտադիր է գուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

3.13 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները:

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Խմբին մատուցում են ծառայություններ, Խումբն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղչված գումարը, Խումբը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Խումբն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Խումբը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

3.14 Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում

Ասոցիացված կազմակերպություն է համարվում այն կազմակերպությունը, որի նկատմամբ Խումբն ունի նշանակալի ազդեցություն: Նշանակալի ազդեցությունն առկա է, երբ Խումբը տվյալ կազմակերպության նկատմամբ ունի ֆինանսական և գործառնական քաղաքականությունների վերաբերյալ որոշումների ընդունմանը մասնակցելու կարողություն, բայց ոչ այդ քաղաքականությունների վերահսկողություն կամ համատեղ վերահսկողություն: Սովորաբար նշանակալի ազդեցությունն արտահայտվում է Խմբի կողմից 20%-50% բաժնեմասերի տիրապետման հիմքով:

Ասոցիացված կազմակերպություններում ներդրումները հաշվառվում են բաժնեմասնակցության մեթոդով, որի շրջանակներում ներդրումը սկզբնապես չափվում է ինքնարժեքով, իսկ այնուհետև ճշգրտվում է ձեռքբերումից հետո ասոցիացված կազմակերպության գուտ ակտիվներում Խմբի բաժնեմասի փոփոխությունների չափով: Խմբի շահույթը կամ վնասը ներառում է ասոցիացված կազմակերպության շահույթում կամ վնասում Խմբի բաժնեմասը, իսկ այլ համապարփակ ֆինանսական արդյունքը՝ ասոցիացված կազմակերպության այլ համապարփակ ֆինանսական արդյունքում Խմբի բաժնեմասը: Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում բաժնեմասնակցության մեթոդով ճանաչված եկամուտները կամ ծախսերը ներկայացվում են առանձին

տողով: Ասոցիացված կազմակերպություններից ստացվելիք շահաբաժինների չափով նվազեցվում է ներդրման հաշվեկշռային արժեքը, սակայն դա չի ճանաչվում որպես եկամուտ:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին Խումբը գնահատում է ասոցիացված կազմակերպություններում ներդրումների գծով արժեզրկումը, եթե առկա է ներդրման գծով որևէ արժեզրկման հայտանիշ: Վերջինիս առկայության դեպքում Խումբը գնահատում է ասոցիացված կազմակերպությունում ներդրման փոխհատուցվող գումարը, և եթե այն փոքր է ներդրման ընթացիկ հաշվեկշռային արժեքից, ապա տարբերության չափով ճանաչվում է արժեզրկումից կորուստ: Արժեզրկմանը հաջորդող յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում Խումբը դիտարկում է թե արդյոք առկա է արժեզրկման հակադարձման որևէ հայտանիշ: Վերջինիս առկայության դեպքում Խումբը գնահատում է ասոցիացված կազմակերպությունում ներդրման փոխհատուցվող գումարը, և եթե այն մեծ է ներդրման ընթացիկ հաշվեկշռային արժեքից, ապա տարբերության չափով ճանաչվում է արժեզրկումից կորուստի հակադարձում, բայց այնպես որ ներդրման ընթացիկ հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն գումարը, որը հաշվարկված կլիներ տվյալ պահին, եթե չլիներ նախկինում ճանաչված արժեզրկումը: Արժեզրկումից կորուստը և արժեզրկման հակադարձումը ներկայացվում են շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում Ասոցիացված կազմակերպության շահույթի կամ վնասի բաժնեմաս տողով:

3.15 Բաժնետիրական կապիտալ

Մայր Ընկերության կողմից թողարկված բաժնեմասեր, որոնք հաշվառվում են անվանական արժեքով: Նոր բաժնետոմսերի թողարկմանը վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված դրամային կամ այլ հատուցման իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

3.16 Շահաբաժիններ

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն՝ դրանց հայտարարման ժամանակաշրջանում:

3.17 Համեմատական տվյալներ

Անհրաժեշտության դեպքում համեմատական տվյալները ճշգրտվում են՝ ընթացիկ տարվա ներկայացման փոփոխություններին համապատասխանելու համար:

4. ՆՈՐ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

Ընթացիկ տարում Խումբը ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2025թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2025թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2025թ. , որևէ էական ազդեցություն չեն ունեցել Խմբի ֆինանսական հաշվետվությունների վրա:

- «Փոխանակելիության բացակայություն» (ՀՀՄՍ 21 փոփոխություն)

Նշված փոփոխությունը էական ազդեցություն չի ունեցել Խմբի ֆինանսական հաշվետվություններին վրա:

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Խմբի ֆինանսական հաշվետվություններին վրա և ներկայացված են ստորև.

- ՀՀՄՄ7 «Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ» - Բացահայտումներ,
- ՀՀՄՄ9 «Ֆինանսական գործիքներ» - Առևտրային դեբիտորական պարքերի չափումը,
- ՀՀՄՄ9 «Ֆինանսական գործիքներ» - Վարձակալության գծով պարտավորությունների ապաճանաչում,
- ՀՀՄՄ9 «Ֆինանսական գործիքներ» - Էլեկտրոնային վճարային համակարգով մարված ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը,
- ՀՀՄՄ9 «Ֆինանսական գործիքներ» - Պայմանական հատկանիշով ֆինանսական ակտիվների հոսքերը որպես բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ,
- ՀՀՄՄ 21 «Արտարժույթի փոփոխությունների հետևանքները» - Վերահաշվարկումը գերադասյին տնտեսության արժույթով,
- ՀՀՄՄ 18 «Ֆինանսական հաշվետվություններում ներկայացումը և բացահայտումը», փոփոխություններ,
- ՀՀՄՄ 7 «Հաշվետվություն դրամական հոսքերի մասին» հաշվապահական ստանդարտում,
- ՀՀՄՄ19 «Հանրային հաշվետվողականություն չունեցող դուստր ընկերություններ . բացահայտումներ»:

5. ՀԱՍՈՒՅԹ

	2025թ.	(հազար դրամ) 2024թ.
Փոստային առաքման ծառայություններ	6,175,843	6,326,827
Միջնորդավճարներ կենսաթոշակի և նպաստների փոխանցումից	634,602	740,167
Միջնորդավճարներ կոմունալ ծառայությունների և այլ վճարների հավաքագրումից	1,748,906	1,615,416
Այլ	369,677	729,834
Ապրանքների վաճառք	214,087	387,188
	9,143,115	9,799,432

Փոստային ծառայությունների գծով հասույթը ճանաչվում է կատարման պարտականության կատարման պահին՝ առաքանին հասցեատիրոջ փոխանցելիս:

6. ՎԱՃԱՌՔԻ ԻՆՔՆԱՐԺԵՔ

	2025թ.	(հազար դրամ) 2024թ.
Հատուցումներ աշխատակիցներին	5,384,164	5,331,141
Փոստային առաքման ծառայությունների վճարներ	591,170	1,004,638
Մաշվածություն և ամորտիզացիա	921,155	697,857
Ստացված ծառայությունների ինքնարժեք	481,475	492,013
Օգտագործված նյութերի և պահեստամասերի արժեք	290,258	283,258
Օգտագործված ապրանքների արժեք	131,963	296,918
Գրասենյակային ծախսեր	85,011	82,165
Ցանցային սպասարկման ծախսեր	135,595	82,237
Այլ	94,726	53,341
	8,115,517	8,323,568

7. ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

	2025թ.	(հազար դրամ) 2024թ.
Հատուցումներ աշխատակիցներին	1,323,337	1,293,032
Չփոխհատուցվող հարկեր	90,058	73,515
Մասնագիտական ծառայություններ	11,897	25,877
Մաշվածություն և ամորտիզացիա	6,057	38,865
Բանկային ծախսեր	248,621	207,646
Գործուղման ծախսեր	18,642	13,069
Այլ ծախսեր	42,795	92,357
	1,741,407	1,744,361

8. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

	2025թ.	(հազար դրամ) 2024թ.
Վարձակալական եկամուտ	148,590	162,504
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	42,000	42,000
Արտարժույթի փոխարկումից եկամուտ, զուտ	51,979	120,951
Այլ եկամուտ	119,396	207,305
	361,965	532,760

9. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

	2025թ.	(հազար դրամ) 2024թ.
Նվիրատվություններ	2,570	10,048
Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսեր	-	819,869
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկումից և դուրս գրումից կորուստ	39,541	10,527
Այլ ծախսեր	42,042	33,446
	84,153	873,890

10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍ, ԶՈՒՏ

	2025թ.	(հազար դրամ) 2024թ.
Բանկային օվերդրաֆտների գծով տոկոսային ծախսեր	(78,991)	(17,778)
Շահաբաժինների գեղչման հակադարձում	(131,419)	(167,479)
Վարձակալության գծով պարտավորության գեղչման հակադարձում	(72,209)	(6,066)
Բանկային ավանդներից և հաշիվներից տոկոսային եկամուտ	422	3,821
Զուտ ֆինանսական ծախս	(282,197)	(187,502)

11. ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԾԱԽՍ

	2025թ.	(հազար դրամ) 2024թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս	790	967,967
Հետաձգված հարկի գծով ծախս/(փոխհատուցում)	(82,703)	(462,354)
(Ծանոթագրություն 20)	(81,913)	505,613

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև

	2025		2024	
(հազար դրամ)	31 դեկտեմբերի ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (18%)	31 դեկտեմբերի ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (18%)
Արդյունք մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ)	(605,072)		(891,109)	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2024թ.՝ 18%)	108,913	(18%)	160,400	(18%)
Փոխանցվող հարկային վնաս (Զհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, զուտ	(28,614)	5%	-	-
	1,614	(0.3%)	(666,013)	74.7%
Շահութահարկի գծով փոխհատուցում	81,913	(13.5%)	(505,613)	56.7%

12. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

	(հազար դրամ)					
	Հոդ	Շենքեր և շինություններ	Մեքենաներ, տրանսպորտային միջոցներ և սարքավորումներ	Տնտեսական գույք և այլ	Օգտագործման իրավունքի ձեռք ակտիվ	Ընդամենը
Սկզբնական կամ վերագնահատված արժեք						
01-ը հունվարի 2024թ	1,690,210	12,967,673	3,259,125	579,602	317,733	18,814,343
Ավելացում	-	5,575	186,073	24,921	-	216,569
Վերագնահատում	5,977,355	9,713,329	-	-	-	15,690,684
Փոխմարում	(504,935)	(2,589,274)	-	-	-	(3,094,209)
Օտարում/Դուրսգրում	(2,375,246)	(3,281,421)	-	-	-	(5,656,667)
Ճշգրտում	-	(6,750)	4,100	1,751	-	(899)
Արտարժույթի վերահաշվարկման տարբերություն	-	(1,788)	(257)	(403)	-	(2,448)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,787,384	16,807,344	3,449,041	605,871	317,733	25,967,373
Ավելացում	-	6,886	50,015	18,546	969,545	1,044,992
Ներքին շարժ/Վերադասակարգում	-	-	(208,081)	207,914	-	(167)
Օտարում/Դուրսգրում	-	(4,886)	(55,424)	(17,864)	-	(78,174)
Ճշգրտում	-	-	(329)	(3,615)	-	(3,944)
Արտարժույթի վերահաշվարկման տարբերություն	-	(3,302)	(475)	(745)	-	(4,522)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,787,384	16,806,042	3,234,747	810,107	1,287,278	26,925,558
Կուտակված մաշվածություն և արժեզրկում						
01-ը հունվարի 2024թ	-	1,854,813	2,161,249	549,453	255,069	4,820,584
Տարվա հաշվարկ	-	405,104	241,585	44,507	32,163	723,359
Փոխմարում	-	(1,891,709)	-	-	-	(1,891,709)
Ճշգրտում	-	(151)	(1,261)	-	-	(1,412)
Արտարժույթի վերահաշվարկման տարբերություն	-	(783)	(190)	(346)	-	(1,319)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	367,274	2,401,383	593,614	287,232	3,649,503
Տարվա հաշվարկ	-	410,607	237,804	44,322	184,307	877,040
Օտարում/Դուրսգրում	-	(357)	(54,986)	(16,162)	-	(71,505)
Ներքին շարժ	-	-	1,875	(2,065)	111	(79)
Արտարժույթի վերահաշվարկման տարբերություն	-	(1,630)	(361)	(655)	-	(2,646)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	775,894	2,585,715	619,054	471,650	4,452,313
Զուտ հաշվեկշռային արժեք						
31 դեկտեմբերի 2024թ	4,787,384	16,440,070	1,047,658	12,257	30,501	22,317,870
31 դեկտեմբերի 2025թ	4,787,384	16,030,148	649,032	191,053	815,628	22,473,245

Հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքում ներառված օգտագործման իրավունքի ձևով ակտիվները վերաբերում են վարձակալված տարածքներին:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամբողջովին մաշված հիմնական միջոցների սկզբնական արժեքը կազմում է 2,011,468 հազար դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,971,591 հազար դրամ):

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի հիմնական միջոցների բոլոր դասերը ներկայացված են վերագնահատված արժեքով՝ բացառությամբ օգտագործման իրավունքի ձևով ակտիվների, որոնք ներկայացված են սկզբնական արժեքով: Ընկերության հողերը, շենքերը և շինությունները վերագնահատվել են 31.03.2024թ. Գրանթ Թորնթոն Քնսայթինգ ՓԲ ընկերության կողմից: Գնահատման մեթոդներն ու մոտեցումները մանրամասն նկարագրված են ծանոթագրություն 27-ում: Եթե հիմնական միջոցները վերագնահատված չլինեին, ապա դրանց հաշվեկշռային արժեքը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կկազմեր 2,228,670 հազար դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2,303,662 հազար դրամ):

Խմբի որոշ սարքավորումներ գրավադրված են:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները հիմնականում ներառում են Երևանում և Հայաստանի տարբեր շրջաններում Խմբի սպասարկման կենտրոնների տարածքների վարձակալությունը և ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ ՎԿ ՓԲԸ-ից լիզինգով ձեռքբերված հիմնական միջոցները: Խմբի սպասարկման կենտրոնների տարածքների համապատասխան պարտավորությունները ներկայացված են «վարձակալության գծով պարտավորություններ» հոլդանգի ներքո:

Հիմնական միջոցների մաշվածության ծախսը բաշխվել է հետևյալ կերպ.

	2025թ.	(հազար դրամ) 2024թ.
Վաճառքի ինքնարժեք	865,576	663,370
Իրացման ծախսեր	5,407	21,124
Վարչական	6,057	38,865
	877,040	723,359

13. ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՎՏԻՎՆԵՐ

	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ և ապրանքանիշեր	(հազար դրամ) Ընդամենը
Սկզբնական արժեք			
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	1,332,372	149,843	1,482,215
Ավելացում	38,403	15,106	53,509
Օտարում	-	-	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,370,775	164,949	1,535,724
Ավելացում	34,760	7,294	42,054
Ներքին շարժ		167	167
Ճշգրտում	(117)		(117)
Օտարում	(242)	(12,155)	(12,397)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,405,176	160,255	1,565,431
Կուտակված ամորտիզացիա և արժեզրկում			
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	929,727	95,290	1,025,017
Տարվա հաշվարկ	60,613	12,039	72,652
Օտարման հետևանքով դուրսգրում	-	-	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	990,340	107,329	1,097,669
Տարվա հաշվարկ	70,934	19,041	89,975
Ներքին շարժ		79	79
Ճշգրտում	(7)		(7)

Օտարման հետևանքով դուրսգրում	(242)	(12,155)	(12,397)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,061,025	114,294	1,175,319
Հաշվեկշռային արժեք			
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	380,435	57,620	438,055
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	344,151	45,961	390,112

Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի ծախսը բաշխվել է հետևյալ կերպ.

	2025թ.	(հազար դրամ) 2024թ.
Վաճառքի ինքնարժեք	55,579	34,487
Կապիտալացում	34,396	37,777
Վարչական	-	388
	89,975	72,652

Բոլոր ոչ նյութական ակտիվներն ունեն որոշակի օգտակար ծառայության ժամկետներ:

14. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԱՍՈՑԻԱՅՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

	2025թ.	(հազար դրամ) 2024թ.
Համաշխարհային առևտրի կենտրոն Երևան ՓԲԸ	6,835,608	-
Ներդրման ինքնարժեք	-	6,788,000
Բաժնետոմսերի վաճառք	(1,357,600)	-
Ասոցիացված կազմակերպության շահույթի բաժնեմաս	77,129	47,608
Բաժնետոմսերի վաճառքից վնաս	(9,522)	-
Ընդամենը ներդրումներ	5,545,615	6,835,608

«Համաշխարհային առևտրի կենտրոն Երևան» ՓԲ ընկերության բաժնետոմսերի 24.798023% (2024թ.՝ 30.997529%) սեփականության իրավունքով պատկանում են «Հայփոստ» ՓԲ ընկերությանը:

Խումբը ասոցիացված կազմակերպությունից շահաբաժիններ չի ստացել:

Ասոցիացված կազմակերպությունում ներդրման գծով ակտիվի հարկային բազան 5,430,400 հազար դրամ է: Խումբը չի ճանաչել համապատասխան հետաձգված հարկային պարտավորություն, քանի որ ըստ ակնկալիքների տարբերությունը չի մարվելու տեսանելի ապագայում և Խումբն ի վիճակի է վերահսկել ժամանակավաճ տարբերությունը:

Ասոցիացված կազմակերպության ֆինանսական ցուցանիշները ներկայացված են ստորև.

	2025թ.	(հազար դրամ) 2024թ.
Ակտիվներ		
Ոչ ընթացիկ ակտիվներ	16,161,953	11,040,460
Ընթացիկ ակտիվներ	6,517,909	11,227,404
Ընդամենը ակտիվներ	22,679,862	22,267,864
Մեփական կապիտալ և պարտավորություններ		
Մեփական կապիտալ	22,512,493	22,201,466
Ընթացիկ պարտավորություններ	167,369	66,398
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	22,679,862	22,267,864
		(հազար դրամ)
	2025թ.	2024թ.
Տարվա զուտ շահույթ	311,027	153,586

15. ՊԱՇԱՐՆԵՐ

	2025թ.	(հազար դրամ) 2024թ.
Նամականիշեր, ծրարներ և բացիկներ	388,759	399,048
Սպառվող նյութեր	204,577	191,375
Ապրանքներ վաճառքի համար	99,354	120,735
Այլ	398	386
	693,088	711,544

16. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ և ԱՅԼ ԴԵՔԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

	2025թ.	(հազար դրամ) 2024թ.
<i>Ֆինանսական ակտիվներ</i>		
Դեբիտորական պարտքեր միջազգային փոստային ծառայությունների գծով	698,646	391,291
Դեբիտորական պարտքեր միջնորդային և այլ ծառայությունների գծով	534,824	746,484
Այլ դեբիտորական պարտքեր	59,175	96,895
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ դեբիտորական պարտքերի գծով	(54,781)	(51,856)
	1,237,864	1,182,814
<i>Ոչ ֆինանսական ակտիվներ</i>		
Տրված կանխավճարներ	190,770	274,831
Կանխավճարված հարկեր	208,137	21,604
Կանխավճարների գծով պահուստ	(3,352)	(4,156)
	395,555	292,279
	1,633,419	1,475,093

Միջազգային փոստային ծառայությունների գծով դեբիտորական պարտքերը հիմնականում առաջանում են նամակների և ծանրոցների առաքումից: Խումբը նամակների և ծանրոցների առաքման ծառայությունները մատուցում և ծառայությունները ստանում է հիմնականում միևնույն գործընկերների շրջանակներում:

Միջազգային փոստային ծառայությունների գծով դեբիտորական պարտքերը ներկայացված են համապատասխան կրեդիտորական պարտքերից զուտ, քանի որ, համաձայն պայմանագրի դրույթների, դրանք պետք է մարվեն զուտ հիմունքով: Հաշվանցված գումարը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 826,437 հազար դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 678,936 հազար դրամ):

Միջնորդային և այլ ծառայությունների գծով դեբիտորական պարտքերն իրենցից ներկայացնում են դրամական փոխանցումների, կոմունալ վճարների հավաքագրումների, կոմիսիոն վաճառքների միջնորդավճարների, գործառնական վարձակալությունների և այլնի գծով ստացման ենթակա դեբիտորական պարտքեր:

Այլ դեբիտորական պարտքերն իրենցից ներկայացնում են նյութական վնասի փոխհատուցման, առհաշիվ տրված գումարների և այլնի գծով ստացման ենթակա դեբիտորական պարտքերը:

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

Ակնկալվող պարտքային կորուստների պահուստի շարժը ներկայացված է ստորև.

	2025թ.	(հազար դրամ) 2024թ.
Կորուստների գծով պահուստը տարվա սկզբում	56,012	324,488
Տարվա ընթացքում պահուստի ճանաչում	8,241	10,396
Տարվա ընթացքում դեբիտորական պարտքերի դուրս գրում	-	(267,516)
Տարվա ընթացքում պահուստի հակադարձում	(6,120)	(11,356)
Կորուստների գծով պահուստը տարվա վերջում	58,133	56,012

26 ծանոթագրությունում ներկայացված են պարտքային ռիսկի և ակնկալվող պարտքային կորուստների վերլուծության վերաբերյալ բացահայտումները: Արժեզրկման պահուստի գումարը հաշվարկելիս կիրառվել է ՖՀՄՍ 9-ի՝ ակնկալվող կորուստների մոդելը:

Տե՛ս ծանոթագրություն 26՝ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

17. ՄՆԱՑՈՐԴՆԵՐ ԴՐԱՄԱՐԿՐՈՒՄ ԵՎ ԲԱՆԿԵՐՈՒՄ

	2025թ.	(հազար դրամ) 2024թ.
Բանկային հաշիվներ	870,382	1,474,903
Կանխիկ միջոցներ	348,837	190,223
Դրամական միջոցներ ճանապարհին	89,186	45,164
	1,308,405	1,710,290

Դրամարկդում և բանկերում մնացորդները ներառում են կոմունալ ծառայություններ մատուցող ընկերությունների անունից հավաքագրված և բնակչությանը կենսաթոշակներ ու նպաստներ բաժանելու նպատակով պետական բյուջեից ստացված դրամական միջոցները, որոնք կազմում են 1,096,678 հազար դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,292,228 հազար դրամ):

Տե՛ս ծանոթագրություն 26՝ դրամարկդում և բանկերում մնացորդների արժույթների բացահայտման համար:

18. ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ**18.1 Բաժնետիրական կապիտալ**

	2025թ.	(հազար դրամ) 2024թ.
Հայտարարված բաժնետոմսեր	Սովորական բաժնետոմսեր	Սովորական բաժնետոմսեր
Սովորական բաժնետոմսերի քանակը, յուրաքանչյուրը՝ 54,600 դրամ	45,282	9,542

18.2 Լրացուցիչ կապիտալ

Լրացուցիչ կապիտալը ներառում է Խմբին Ավստրալիայի քաղաքացու կողմից նվիրաբերած 333,480 ԱՄՆ դոլարի ակտիվները: Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թ. հունիսի 17-ի որոշման՝ այս գումարը պետք է դիտվի որպես սեփական կապիտալում լրացուցիչ կապիտալ, որը հետագայում պետք է գրանցվի որպես բաժնետիրական կապիտալի ավելացում:

18.3 Արտարժույթի փոխարկման պահուստ

Արտարժույթի փոխարկման պահուստն առաջանում է արտերկրյա դուստր ընկերության ֆինանսական հաշվետվությունները ներկայացման արժույթով՝ դրամով վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերություններից:

18.4 Վերագնահատման պահուստ

Վերագնահատման պահուստն առաջանում է հիմնական միջոցների վերագնահատման արդյունքում: Վերագնահատումից աճը ճանաչվում է կուտակված շահույթում՝ Խմբի կողմից այդ ակտիվների օգտագործման ընթացքում: Վերագնահատված ակտիվների օտարման ժամանակ դրանց գծով վերագնահատման պահուստի աճն ամբողջությամբ հաշվեգրվում է կուտակված շահույթին: Վերագնահատման պահուստը ներկայացված է սեփական կապիտալում՝ համապատասխան հարկերից զուտ:

18.5 Այլ պահուստներ

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Խմբի բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Խմբի՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստված համախմբված ֆինանսական հաշվետվություններում գրանցված չբաշխված շահույթի մնացորդով՝ բացառությամբ չբաշխված շահույթի գծով գործող ստորն ներկայացված սահմանափակումների:

Օրենսդրական պահանջների և Խմբի կանոնադրության համաձայն՝ Խումբն իր չբաշխված շահույթից պետք է ստեղծի բաշխման ոչ ենթակա պահուստ բաժնետիրական կապիտալի 15%-ի չափով՝ ապագա վնասները ծածկելու նպատակով, որը պետք է կազմի 370,860 հազար դրամ:

19. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐԻ ԳԾՈՎ

2017թ. Խումբը հաստատել էր 2,500,000 հազար դրամ շահաբաժին, որից հաշվետու ժամանակաշրջանում վճարվել է 500,000 հազար դրամ: 2021թ. դեկտեմբերի 31-ին կայացվել է Կառավարության որոշում, համաձայն որի շահաբաժինների վճարումը հետաձգվել է 3 տարով, որից հետո շահաբաժինը պետք է վճարվի հավասարաչափ գումարներով՝ սկսած 2023թ. մինչև 2027թ.:

Պարտավորությունը ճանաչվել է իրական արժեքով: Իրական արժեքը որոշվել է զեղչելով ապագա դրամական հոսքերը 10.7% տարեկան տոկոսադրույքով: Արդյունքում, հաշվետու տարվա ընթացքում ճանաչվել է շահաբաժինների գծով պարտավորության զեղչման հակադարձումից ֆինանսական ծախս՝ 131,419 հազար դրամ (2024թ.-ին՝ 167,479 հազար դրամ ծախս) (տես ծանոթագրություն 10):

20. ՀԵՏԱԶԳՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

	2025թ.	2024թ.
	(հազար դրամ)	
Տարեսկզբի մնացորդ	(3,267,888)	(1,586,003)
Տարվա արդյունքում ճանաչված փոխհատուցում/(ծախս)	82,703	462,354
Կապիտալում ճանաչված	-	(2,144,239)
Տարեվերջի մնացորդ	(3,185,185)	(3,267,888)

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների շարժ

2025 (հազար դրամ)	1 հունվարի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ արդյունքում ճանաչված	31 դեկտեմբերի դրությամբ
Հետաձգված հարկային ակտիվներ				
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	10,082	382	-	10,464
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	263,080	(16,510)	-	246,570
Վարձակալության գծով պարտավորություններ	-	123,560	-	123,560
Փոխանցվող հարկային վնաս	-	28,614	-	28,614
Այլ	-	130	-	130
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	273,162	136,176	-	409,338
Հետաձգված հարկային պարտավորություններ				
Հիմնական միջոցներ	3,541,050	(63,305)	-	3,477,745
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ	-	116,778	-	116,778
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություններ	3,541,050	53,473	-	3,594,523
Զուտ հետաձգված հարկային ակտիվներ/(պարտավորություններ)	(3,267,888)	82,703	-	(3,185,185)

2024 (հազար դրամ)	1 հունվարի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ արդյունքում ճանաչված	31 դեկտեմբերի դրությամբ
Հետաձգված հարկային ակտիվներ				
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	58,408	(48,326)	-	10,082
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	273,681	(10,601)	-	263,080
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	332,089	(58,927)	-	273,162
Հետաձգված հարկային պարտավորություններ				
Հիմնական միջոցներ	1,918,092	(521,281)	2,144,239	3,541,050
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություններ	1,918,092	(521,281)	2,144,239	3,541,050
Զուտ հետաձգված հարկային ակտիվներ/(պարտավորություններ)	(1,586,003)	462,354	2,144,239	(3,267,888)

Մայր ընկերության տարվա հարկային վնասը կազմում է 158,96 հազար ՀՀ դրամ, որը ՀՀ օրենսդրության համաձայն կարող է օգտագործվել հաջորդ հինգ տարիների ընթացում:

21. ՎԱՐԿԵՐ ԵՎ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	2025թ.	(հազար դրամ) 2024թ.
Ոչ ընթացիկ		
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ	170,965	-
	170,965	-
Ընթացիկ		
Գրավով ապահովված բանկային վարկեր	200,025	58,582
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունների կարճաժամկետ մաս	25,143	-
	225,168	58,582
Ընդամենը վարկեր և փոխառություններ	396,133	58,582

Վարկերի ու փոխառությունների պայմաններն ու ժամկետները ներկայացված են ստորև.

(հազար դրամ)

	Արժույթ	Մարման տարի	Անվանական տոկոսադրույք	2025թ.	2024թ.
Գրավով ապահովված բանկային վարկ (վարկային գիծ)	ՀՀ դրամ	2025թ.	12%	-	58,582
Գրավով ապահովված բանկային վարկ (վարկային գիծ)	ՀՀ դրամ	2027թ.	13.00%	200,025	-
Լիզինգ	ՀՀ դրամ	2030թ.	10%-14%	196,108	-
				396,133	58,582

22. ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խումբը վարձակալել է տարածքներ իր գործունեությունն իրականացնելու նպատակով: Բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների՝ յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն: Խումբը դասակարգում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվները հիմնական միջոցներ տողի առանձին դասում (տե՛ս ծանոթագրություն 12):

Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր վարձակալություն պարունակում է սահմանափակում, ըստ որի, օգտագործման իրավունքի ձևով ակտիվը կարող է օգտագործել միայն Խումբը՝ քանի դեռ առկա չէ ակտիվը այլ կողմի տրամադրելու պայմանագրային իրավունք: Վարձակալությունները կամ չեղյալ չհայտարարվող են, կամ կարող են չեղյալ հայտարարվել՝ միայն առաջացնելով նշանակալի դադարեցման վճար: Որոշ վարձակալություններ պարունակում են վարձակալության ժամկետը երկարացնելու հնարավորություն:

Վարձակալության գծով պարտավորությունները զեղչելու նպատակով Խմբի կողմից կիրառված փոխառության միջին կշռված տոկոսադրույքը կազմել է 11.6%:

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա տոկոսային ծախսը, որը հաշվեգրվել է վարձակալության գծով պարտավորություններին, կազմել է 72,209 հազար դրամ (2024թ.՝ 6,066 հազար դրամ) և ներառվել է ֆինանսական ծախսերում:

Վարձակալության գծով պարտավորություն

(հազար դրամ)

	2025թ.	2024թ.
Սկզբնական մնացորդ առ 01/01	40,293	45,686
Վերաչափում	201,383	23,088
Ավելացում	599,209	3,446
Տոկոսներ	72,209	6,066
Մարումներ	(222,951)	(37,993)
Վերջնական մնացորդ առ 31/12	690,143	40,293
Այդ թվում ընթացիկ	252,321	27,164
Այդ թվում ոչ ընթացիկ	437,821	13,129

Վարձակալության գծով պարտավորության չզեղչված գումարների ժամկետների բացահայտում

(հազար դրամ)

Մինչև 1 տարի	268,455	27,164
1-5 տարի	588,970	16,857
	857,425	44,021

23. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

(հազար դրամ)

	2025թ.	2024թ.
Հաճախորդներից հավաքագրված վճարների գծով	1,038,770	1,273,396
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	1,378,416	1,471,966

Միջազգային փոստային ծառայությունների գծով կրեդիտորական պարտքեր	725,924	822,118
Այլ առևտրային կրեդիտորական պարտքեր	100,824	185,291
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	188,527	227,472
Ստացված կանխավճարներ	302,183	268,308
Այլ պարտավորություններ	1,143	15,798
	3,735,787	4,264,349

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Խումբն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություն, որն ապահովում է բոլոր պարտավորությունների ժամանակին կատարումը (տե՛ս ծանոթագրություն 26)

Միջազգային փոստային ծառայությունների գծով կրեդիտորական պարտքերը ներկայացված են համապատասխան դեբիտորական պարտքերից գուտ: Հաշվանցված գումարը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 826,437 հազար դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 678,936 հազար դրամ):

Հաճախորդներից կանխավճարները ներկայացնում են հաճախորդների կողմից Խմբին վճարված այն գումարները, որոնք արվել են նախքան պայմանագրով խոստացված ապրանքների ու ծառայությունների ստացումը: 2026թ. ընթացքում 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կանխավճարների ողջ գումարը Խումբն ակնկալում է ճանաչել որպես հասույթ:

Խմբի արտարժույթային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 26-ում:

24. ԿԱՐԵՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

Խումբն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալական պարտավորություններ

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների և վարձակալական պարտավորությունների արժեքը հաշվարկվում է ղեկավարության գնահատականների հիման վրա, ինչպես նաև լրացուցիչ փոխառության տոկոսադրույքի, որն օգտագործվում է վարձակալական վճարը գեղջելու համար: Վարձակալության ժամկետը համապատասխանում է յուրաքանչյուր պայմանագրի վարձակալության չեղյալ չհայտարարվող ժամկետին, բացառությամբ այն դեպքերի, երբ Խումբը ողջամտորեն վստահ է, որ կիրառելու է երկարաձգման հնարավորությունը: Վարձակալության ժամկետը գնահատելու ժամանակ Խումբը հաշվի է առնում այն բոլոր փաստերն ու հանգամանքները, որոնք Խմբի համար վարձակալությունը երկարաձգման հնարավորությունը կիրառելու համար տնտեսական խթան են հանդիսանում, ինչպիսիք են վարձակալված վայրում գտնվող ակտիվի օգտակար ծառայության ժամկետը, վայրերի փոխարինման վիճակագրությունը, տեխնոլոգիական փոփոխության հերթականությունը, ծառայությունների մատուցման կենտրոնների շահութաբերությունը, ինչպես նաև վարձակալության պայմանագրերը լուծելու և կնքելու ծախսերը:

Այս գործոններում տեղի ունեցած փոփոխությունները կարող են ազդել գնահատված վարձակալության ժամկետի և օգտագործման իրավունքով ակտիվների և վարձակալական պարտավորությունների գրանցված արժեքի վրա:

Իրական արժեքի չափումը

Այն պարագայում, երբ գործող շուկաների տվյալները բացակայում են, ֆինանսական գործիքների և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշելու համար դեկավարությունը օգտագործում է գնահատման մեթոդներ: Այս գործընթացն ընդգրկում է գնահատումների և ենթադրությունների մշակում, որոնք համահունչ են նրա հետ, թե ինչպես շուկայի մասնակիցները կգնահատեն գործիքը: Դեկավարությունն իր ենթադրությունների համար որպես հիմք է վերցնում դիտարկելի տեղեկատվությունը, սակայն այդպիսի տեղեկատվությունը միշտ չէ, որ հասանելի է: Այս պարագայում դեկավարությունը օգտագործում է հասանելի լավագույն տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել հաշվետու ամսաթվի դրությամբ իրական գներից, որոնք կարող են ստացվել պարզաձև ձեռքի գործարքի պարագայում (տես ծանոթագրություն 26):

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստ

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստը հաշվարկելու համար Խումբն օգտագործում է պահուստի մատրիցան: Պահուստի դրույքաչափերը հաշվարկվում են՝ հիմնվելով հաճախորդների տարբեր սեգմենտների խմբավորումներից առաջացած ժամկետանց օրերի վրա, որոնք կորստի նույնատիպ մոդել ունեն (օրինակ՝ ըստ աշխարհագրական դիրքի, արտադրանքի տեսակի, հաճախորդի տեսակի և վարկանիշի, ակրեդիտիվների և պարտքային ապահովագրության այլ տեսակների):

Սկզբնապես պահուստի մատրիցան հիմնված է Խմբի՝ պարտքը չմարելու դիտարկված պատմական գործակիցների վրա: Խումբը ստուգել է պահուստի մատրիցան՝ պատմական պարտքային կորստի փորձառությունն ապագան կանխատեսող տեղեկության հետ ճշգրտելու համար: Տնտեսական պայմանների կանխատեսման ազդեցությունն ակնկալվող պարտքային կորուստների որոշման վրա աննշան է եղել: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում պարտքը չմարելու դիտարկված պատմական գործակիցները թարմացվում են և փոփոխությունները վերլուծվում են ապագան կանխատեսող գնահատականներում:

Պարտքը չմարելու դիտարկված պատմական գործակիցների, տնտեսական պայմանների կանխատեսման և ակնկալվող պարտքային կորուստների միջև հարաբերակցության գնահատումը նշանակալի է: Ակնկալվող պարտքային կորուստների արժեքը հանգամանքների և կանխատեսվող տնտեսական պայմանների նկատմամբ զգայուն է: Խմբի պատմական պարտքային կորստի փորձառությունը և տնտեսական պայմանների կանխատեսումը կարող են չարտահայտել հաճախորդի՝ ապագայում սպասվող պարտքը չմարելու հավանականությունը: Խմբի առևտրային դեբիտորական պարտքի և պայմանագրային ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստների վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է ծանոթագրություն 26-ում:

Գործարքներ, որտեղ Խումբը գործում է որպես գործակալ

Խումբը միջնորդավճարի դիմաց կոմունալ ծառայություններ մատուցող ընկերությունների անունից իրականացնում է կոմունալ և այլ վճարների հավաքագրումներ (միջնորդային ծառայություններ), դրամական փոխանցումներ, վիճակախաղի տոմսերի վաճառք, ինչպես նաև թոշակների և նպաստների բաժանում: Հաշվետու ժամանակաշրջանի վերջում այս գործարքների արդյունքում առկա են կրեդիտորական պարտքեր և դրամական միջոցներ, որոնք ներկայացված են առանձին: Դեկավարությունը որոշում է ընդունում դրամական միջոցները և համապատասխան կրեդիտորական պարտքերը ճանաչել համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ կարծում է, որ Խումբը վերահսկում է երրորդ անձանցից հավաքագրված գումարը, և ապագա տնտեսական օգուտների հոսք է սպասվում դեպի Խումբ:

Ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Խումբը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատում է արդյոք առկա են հայտանիշներ, որ ոչ նյութական ակտիվները կարող են արժեզրկված լինել:

Արժեզրկման հայտանիշները ներառում են գործարար ծրագրերի, ակտիվների շահագործման կանխատեսումների, ինչպես նաև այլ գործոնների ազդեցությունը, որոնք կարող են բացասական անդրադառնալ իմրի գործունեության վրա:

25. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԸ

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

	2025թ.	(հազար դրամ) 2024թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,237,864	1,182,814
Մնացորդներ բանկերում և դրամարկղում	1,308,405	1,710,290
	2,546,269	2,893,104

Ֆինանսական պարտավորություններ

	2025թ.	(հազար դրամ) 2024թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	396,133	58,582
Վարձակալության գծով պարտավորություններ	690,143	40,293
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	3,245,077	3,768,569
Պարտավորություններ շահաբաժինների գծով	859,690	1,228,271
	5,191,043	5,095,715

26. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՂՂԱԹՅՈՒՆՆԵՐԸ

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Խումբը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- Պարտքային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ
- Շուկայական ռիսկ

Ղեկավարությունը լիովին պատասխանատու է իմրի ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար:

Խմրի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Խումբը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են շուկայական պայմանների ու Խմրի գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Խումբը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Խմրի պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցներն ու առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Պարտքային ռիսկը կառավարվում է խմրային հիմունքով՝ ելնելով Խմրի պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների և ավանդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է ավանդները տարբեր բանկերում պահելու միջոցով և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Խումբը շարունակաբար հսկում է հաճախորդների պարտքի հատկանիշները՝ ելնելով պարտքի վարկանշային քարտից: Եթե հնարավոր է, օգտագործվում են նաև հաճախորդների վերաբերյալ արտաքին վարկանիշներ և հաշվետվություններ: Խմբի քաղաքականությունն է համագործակցել միայն վճարունակ գործընկերների հետ: Ընթացիկ պարտքային ռիսկը կառավարվում է պարբերական ժամկետային վերլուծություններ կատարելու միջոցով՝ համատեղելով յուրաքանչյուր հաճախորդի համար կրեդիտային սահմանաչափի որոշմամբ:

Առևտրային դեբիտորական պարտքերը ներառում են մեծ քանակությամբ հաճախորդներ տարբեր արդյունաբերական և աշխարհագրական գոտիներում: Առևտրային դեբիտորական պարտքերի համար Խումբը գրավ չի վերցնում: Բացի այդ, Խումբը գրավ չի պահանջում նաև այլ ֆինանսական ակտիվների համար:

Պարտքային ռիսկի ազդեցությունը

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքով: Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը հաշվետու ամսաթվի դրությամբ բերված է ստորև.

	2025թ.	(հազար դրամ) 2024թ.
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,237,864	1,182,814
Ընթացիկ բանկային հաշիվներ	959,568	1,520,067
	2,197,432	2,702,881

Առևտրային դեբիտորական պարտքեր

Հաճախորդների գերակշիռ մասի հետ Խումբը համագործակցում է երկար տարիների ընթացքում և հազվադեպ է վնաս կրել այդ գործարքներից: Հաճախորդների հետ կապված պարտքային ռիսկը վերահսկելիս հաճախորդները խմբավորվում են ըստ պարտքային առանձնահատկությունների, աշխարհագրական տարածաշրջանի, գործունեության ճյուղի, պարտքերի ժամկետայնության և նախկինում ֆինանսական բարդությունների առկայության:

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային դեբիտորական պարտքերի գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը՝ ըստ հաճախորդի տեսակների:

	2025թ.	(հազար դրամ) 2024թ.
Հաշվեկշռային արժեքներ		
Միջազգային փոստային օպերատորներ	698,646	391,291
Տեղական դեբիտորական պարտքեր ՀՀ-ում մատուցված ծառայությունների գծով	539,218	791,523
	1,237,864	1,182,814

Միջազգային փոստային օպերատորների դեբիտորական պարտքերի մնացորդները մարվում են կողմերի միջև փոխհաշվարկներն իրականացնելուց հետո:

Խումբը բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի համար կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոդելը. «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում», քանի որ այս դեբիտորները չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ:

Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվել են հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ: Դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից և հաճախորդների աշխարհագրական դիրքից:

Ակնկալվող կորուստների դրույքաչափերը հաշվարկվել են՝ հիմնվելով նախորդ տարիների ընթացքում վաճառքի դիմաց ստացված վճարումների պատկերի վրա, ինչպես նաև հաշվի առնելով այդ ժամանակամիջոցում ձևավորված պատմական պարտքային կորուստները: Այս պատմական դրույքաչափերը ճշգրտվում են, որպեսզի արտացոլեն ընթացիկ և ապագային վերաբերող

մակրոտնտեսական գործոններին, որոնք ազդեցություն ունեն հաճախորդի՝ չվճարված մնացորդը մարելու կարողության վրա: Խումբը գնահատել է, որ ամենահամապատասխան գործոն են հանդիսանում հաճախորդների տեղակայման երկրների համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) և գործազրկության մակարդակը, և ճշգրտում է կորուստների պատմական դրույքաչափերն այդ գործոններով պայմանավորված սպասվող փոփոխությունների չափով: Այնուամենայնիվ, հաշվի առնելով պարտքային ռիսկի կարճաժամկետ բնույթը՝ այս մակրոտնտեսական գործոնների ազդեցությունը հաշվետու ժամանակաշրջանում էական չի:

Երբ հավանական չէ առևտրային դեբիտորական պարտքերի հավաքագրումը, դրանք դուրս են գրվում (ապաճանաչվում են): Հաշիվ-ապրանքագրի ամսաթվից հետո 365 օրվա ընթացքում վճարում չկատարելը և Խմբի հետ այլընտրանքային վճարման վերաբերյալ համաձայնության չգալը համարվում է գումարի վերադարձման վերաբերյալ խելամիտ սպասումներ չունենալու համար հայտանիշ:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը անկարող կլինի կատարել իր պարտավորությունները: Իրացվելիության ռիսկը առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Այդ անհամապատասխանությունը կարող է մեծացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել կորուստների ռիսկը: Խումբն ունի այդպիսի կորուստների նվազեցմանն ուղղված ընթացակարգեր, որոնցից են բավարար դրամային միջոցներ և այլ բարձր իրացվելիության ընթացիկ ակտիվներ պահելը, ինչպես նաև համապատասխան վարկային միջոցների առկայությունը:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Խմբի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չգեղջված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Խումբը ստիպված կլինի մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2025

(հազար դրամ)

	Հաշվեկշռային արժեք	Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր	Մինչև 3 ամիս	3-12 ամիս	1-5 տարի
Վարկեր և փոխառություններ	396,133	416,780	8,542	225,978	182,260
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	3,735,787	3,735,787	1,566,943	2,168,844	-
Վարձակալության գծով պարտավորություններ	690,143	857,425	67,114	201,341	588,970
Շահաբաժինների գծով պարտավորություններ	859,690	1,000,000	-	500,000	500,000
Շահութահարկի գծով պարտավորություն	552	552	552	-	-
	5,682,305	6,010,544	1,643,151	3,096,163	1,271,230

2024

(հազար դրամ)

	Հաշվեկշռային արժեք	Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր	Մինչև 3 ամիս	3-12 ամիս	1-5 տարի
Վարկեր և փոխառություններ	58,582	58,582	58,582	-	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4,264,349	4,264,349	1,699,438	2,564,911	-
Վարձակալության գծով պարտավորություններ	40,293	44,021	-	27,164	16,857
Շահաբաժինների գծով պարտավորություններ	1,228,271	1,500,000	-	500,000	1,000,000
Շահութահարկի գծով պարտավորություն	888,181	888,181	888,181	-	-
	6,479,676	6,755,133	2,646,201	3,092,075	1,016,857

1) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Խումբը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժույթային ռիսկի:

Արտարժույթային ռիսկ

Խումբը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Խմբի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Խմբի՝ արտերկրյա վաճառքներից և ձեռքբերումներից, որոնք ի սկզբանե արտահայտված են ԱՄՆ դոլարով, եվրոյով, ՀՓԻ-ով (հատուկ փոխանակման իրավունք) և այլ:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Խմբին ենթարկում են արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով:

31 դեկտեմբեր 2025թ.

	ԱՄՆ դոլար	Եվրո	ՀՓԻ	(հազար դրամ) Ռուբլի
Ֆինանսական ակտիվներ				
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	303,138	2,969	309,389	100,587
Մնացորդներ բանկերում և դրամարկղում	57,024	46,428	-	639,443
	<u>360,162</u>	<u>49,397</u>	<u>309,389</u>	<u>740,030</u>
Ֆինանսական պարտավորություններ				
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	41,772	45,788	691,822	152,611
	<u>41,772</u>	<u>45,788</u>	<u>691,822</u>	<u>152,611</u>
Զուտ ենթարկվածություն	<u>318,390</u>	<u>3,609</u>	<u>(382,433)</u>	<u>587,419</u>

31 դեկտեմբեր 2024թ.

	ԱՄՆ դոլար	Եվրո	ՀՓԻ	(հազար դրամ) Ռուբլի
Ֆինանսական ակտիվներ				
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,065,544	4,130	311,466	110,618
Մնացորդներ բանկերում և դրամարկղում	50,298	177,520	-	431,412
	<u>1,115,842</u>	<u>181,650</u>	<u>311,466</u>	<u>542,030</u>
Ֆինանսական պարտավորություններ				
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	68,701	27,120	781,141	115,286
	<u>68,701</u>	<u>27,120</u>	<u>781,141</u>	<u>115,286</u>
Զուտ ենթարկվածություն	<u>1,047,141</u>	<u>154,530</u>	<u>(469,675)</u>	<u>426,744</u>

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Խմբի զգայունությունը՝ արտարժույթների նկատմամբ դրամի 10% (2024թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով:

Դրամի արժևորումը համապատասխան արտարժույթի նկատմամբ 10%-ով (2024թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

Հազար դրամ	2025թ.	2024թ.
ԱՄՆ դոլարի ազդեցություն	(31,839)	(104,714)
Եվրոյի ազդեցություն	(361)	(15,453)
ՀՓԻ ազդեցություն	38,243	46,968
Ռուբլի	(58,742)	(42,674)

Խումբը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.:

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափում

Խմբի հոդը և շենքերը հաշվառվում են վերագնահատված արժեքով: Հողերի, շենքերի, շինությունների և շարժական գույքի գնահատված իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 2-րդ և 3-րդ մակարդակներում: Հողի և շենքերի գնահատումն իրականացվել է 2024թ.-ի մարտի 31-ին անկախ պրոֆեսիոնալ գնահատողի կողմից, որն ունի պատշաճ մասնագիտական որակավորում, անհրաժեշտ արտոնագրեր և համապատասխան փորձ անշարժ և շարժական գույքի իրական արժեքի գնահատում իրականացնելու ոլորտում: Զգալի փոփոխականները և ենթադրությունները մշակվել են ղեկավարության հետ սերտ համագործակցության պայմաններում:

Հողեր

Հողերի գնահատումն իրականացվել է՝ օգտագործելով շուկայական մոտեցումը, որն արտացոլում է նմանատիպ գույքի համար վերագնահատման օրվա դրությամբ իրականացված շուկայական գործարքներում դիտարկված գները և միավորում է վերոհիշյալ հողերին յուրահատուկ ցուցանիշների ճշգրտումները՝ ներառյալ հողամասի չափը, գտնվելու վայրը, սահմանափակումները և օգտագործման նպատակը:

Գնահատվող հողամասի 1 քմ-ի արժեքն ընդունվել է համեմատական հողամասերի 1 քմ հաշվարկային արժեքների միջին թվաքանականը:

Համեմատական հողամասերի նկատմամբ կիրառվել են դրական և բացասական ճշտումներ՝ արտահայտված գործակիցներով: Դրական ճշտումը կիրառվում է այն ժամանակ, երբ գնահատվող հողամասի բնութագրող տվյալները գերազանցում են համեմատական հողամասի տվյալներին: Բացասական ճշտումը կիրառվում է այն ժամանակ, երբ գնահատվող հողամասի բնութագրող տվյալները զիջում են համեմատական հողամասի տվյալներին:

Շենքեր և շինություններ

Շենքերի իրական արժեքները գնահատվել են՝ օգտագործելով համեմատական, եկամտի և փոխարինման (ծախսային) մեթոդները:

Համեմատական մեթոդով շենքերի և շինությունների իրական արժեքը որոշելիս հաշվի է առնվել նույն ժամանակաշրջանում նույն աշխարհագրական տարածքում նմանատիպ շենքերի շուկայական գինը:

Եկամտի մեթոդով հաշվարկելիս իրական արժեքը որոշվել է՝ հիմնվելով այլընտրանքային արժեքի վրա: Այս մեթոդով համեմատվում են գուտ եկամուտը, որը կստացվեր, եթե գույքը տրվեր վարձակալության մնացած օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, և եկամուտը, որը կստացվեր, եթե դրա ձեռքբերման գումարը ներդրվեր համարժեք ռիսկայնության ձեռնարկում:

Փոխարինման (ծախսային) մեթոդով շենքերի իրական արժեքը որոշվել է՝ հաշվի առնելով նմանատիպ շենքեր կառուցելու համար պահանջվող ծախսերը՝ հանելով հաշվարկված մաշվածությունը, որը ներառում է վերագնահատման օրվա դրությամբ ֆիզիկական, տնտեսական և ֆունկցիոնալ մաշվածքները:

Մեքենա-սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ, տնտեսական գույք և այլ հիմնական միջոցներ

Մեքենա-սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ, տնտեսական գույք և այլ հիմնական միջոցների (այսուհետ՝ շարժական հիմնական միջոցներ) իրական արժեքը որոշելիս կիրառվել են ծախսային և համեմատական գնահատման մեթոդները:

Շարժական հիմնական միջոցների միավորի վերականգնման արժեքը որոշելիս օգտագործվել են հետևյալ աղբյուրները.

- տեղեկատվություն արտադրող ընկերություններից,
- ներքին շուկայի տեղեկատվություն,
- ինտերնետային կայքերի տեղեկատվություն,
- հաշվեկշռային արժեք:

Շարժական հիմնական միջոցների միավորի վերականգնման արժեքը հաշվարկվել է շարժական հիմնական միջոցների դասակարգչի միջոցով:

Այն շարժական հիմնական միջոցները, որոնց միավորի վերականգնման արժեքը հնարավոր չի եղել որոշել վերոնշյալ աղբյուրներից, ըստ համապատասխան դասերի ինդեքսավորվել են: Որպես ինդեքս ընտրվել է համախառն հաշվեկշռային արժեքների և գնահատված միավորի վերականգնման արժեքների համադրությունը:

28. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԴԵՊԶԵՐ

Գործարար միջավայր

Որպես զարգացող շուկայական տնտեսական համակարգ, Հայաստանը շարունակում է անցնել քաղաքական և տնտեսական վերափոխումներ՝ կապված կենտրոնացված պլանավորումից դեպի ազատ շուկա անցման հետ: Հայաստանը չի ավարտել զարգացած ինստիտուցիոնալ համակարգի և ենթակառուցվածքների ձևավորման գործընթացը, որոնք սովորաբար առկա են ավելի հասուն ազատ շուկայական տնտեսություններում:

Նման տնտեսություններում գործող ընկերությունների համար վերը նշվածը առաջացնում է արտաձին գործոնների, ինչպիսիք են հարկային վարչարարությունը, կապիտալի հոսքի վերահսկողությունը, արտադրության գործառնությունները, ձևականությունները, արտահանման / ներմուծման սակագները և այլն, շարունակական կամ երբեմն կտրուկ փոփոխությունների բնորոշ ռիսկ, այդ գործոնները կարող են բացասաբար ազդել Խմբի հետագա ֆինանսական վիճակի և արդյունքների վրա: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա տարակուսանքներն ու ենթադրությունները շատ են, դեկավարությունը չի կարող արժանահավատորեն գնահատել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա:

Ընկերության դեկավարությունը գտնում է, որ համապատասխան քայլեր է ձեռնարկում գոյություն ունեցող պայմաններում՝ Խմբի կայունությունն ապահովելու համար:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են զարգացած շուկայական տնտեսություններում, Հայաստանում դեռևս այստեղ չեն կիրառվում:

Հարկեր

Հայաստանի հարկային համակարգին բնորոշ են օրենսդրության հաճախակի փոփոխությունները և Հարկային օրենսգրքի սխալ մեկնաբանությունից և գործնականում սխալ կիրառությունից բխող վիճաբանությունները:

Այդ հանգամանքները կարող են Հայաստանում գործող ընկերությունների համար ստեղծել հարկային ռիսկեր, ինչը բնորոշ է աշխարհի ցանկացած այլ զարգացող շուկայական տնտեսություններին: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ՝ հիմնվելով կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական դրույթների և դատական որոշումների իրենց մեկնաբանության վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց գերակայության դեպքում ազդեցությունը սույն ֆինանսական հաշվետվությունների վրա կարող է զգալի լինել:

29. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՌԱՋԱՑՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՂՐՈՒՄ

Խմբի՝ ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորություններում փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

Ֆինանսական պարտավորություններ			
(հազար դրամ)		2025թ.	2024թ.
Հունվարի 1-ի դրությամբ		98,875	236,097
Դրամային հոսքերից			
Մարումներ	(3,924,995)		(222,536)
Մուտքեր	3,833,494		65,000
Վճարված տոկոսներ	(71,007)		(1,212)
Ոչ դրամային հոսքերից			
Ավելացումներ	1,004,518		
Տոկոսի հաշվեգրում	151,200		23,844
Սուբսիդավորվող տոկոսներ	(5,378)		
Ճշգրտում	(431)		(2,318)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ		1,086,276	98,875

30. ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ

Խմբի կապակցված կողմերը ներառում են բաժնետիրոջը, միևնույն վերահսկողության տակ գտնվող ընկերությունները, ինչպես նաև հիմնական ղեկավար անձնակազմը:

Խմբի միակ բաժնետերը Հայաստանի Հանրապետության կառավարությունն է՝ ի դեմս ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության:

Ստորև ներկայացված են կապակցված կողմերի հետ կատարված գործարքներն ու մնացորդները:

Գործարքներ	2025թ.	(հազար դրամ)
		2024թ.
Միակ բաժնետեր		
Բաժնետիրական կապիտալի համալրում	-	1,951,404
Շահաբաժինների վճարում	500,000	573,073
Հիմնական ղեկավար անձնակազմ		
Աշխատավարձ և պարգևատրումներ	227,198	176,761

(հազար դրամ)

Մնացորդներ	2025թ.	2024թ.
Միակ բաժնետեր		
Շահաբաժիններ	1,000,000	1,500,000

31. ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆԻՑ ՀԵՏՈ ՏԵՂԻ ՈՆԵՑԱԾ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀՀ կառավարության 25 սեպտեմբերի 2025թ. N 1354-Ա որոշման համաձայն «Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ հատուկ կոնստրուկտորական բյուրո» փակ բաժնետիրական ընկերությունը միացման ձևով վերակազմակերպվել և միացվել է «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերությանը: Միացման գործընթացը իրականացվել է 2026թ. մարտ ամսին:

2. Հաշվետու ամսաթվից հետո, բայց մինչև հաշվետվությունների վավերացումը՝ 2026թ. փետրվարի 28-ին ԱՄՆ և Իսրայելի ռազմական ուժերը հարձակում են սկսել Իրանի վրա, որին հաջորդել են հակահարվածներ տարածաշրջանային տարբեր պետությունների ուղղությամբ: Այս ռազմական էսկալացիան կարող է զգալի հետևանքներ ունենալ Հայաստանի Հանրապետության ողջ տնտեսության վրա, քանի որ շատ նշանակալի են Հայաստանի առևտրատնտեսական կապերը և՛ Իրանի, և՛ ռազմական գործողություններում ներգրավված այլ երկրների հետ:

Խումբը չունի ուղղակի առևտրային գործընկերներ ռազմական գործողություններում ներգրավված տարածաշրջանային երկրներում, սակայն այս հակամարտության լայնամասշտաբ ազդեցությունը կունենա որոշ հետևանքներ նաև Խմբի գործառնությունների վրա: Ղեկավարությունը շարունակաբար վերլուծում է էսկալացիայի ազդեցությունը Խմբի գործունեության արդյունքների վրա, սակայն ֆինանսական հաշվետվությունների վավերացման ամսաթվի դրությամբ հնարավոր չէ իրականացնել արժանահավատ քանակական գնահատումներ: